

Երևանի պետական լեզվաբանական համալսարան

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՈՒՄԸ

ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐՆ ՈՒ ՇՈՒԿԱՆ

Հեղինակ՝ Ն. Մանասյան

Որակի ապահովման կենտրոն
Երևան, 2011թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ.....	3
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	6
ԳԼՈՒԽ 1. ՄԻԶԱԶԳԱՅՆԱՑՈՒՄՆ ՈՒ ԶԲԱՂՎՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ.....	9
Բարձրագույն կրթության միջազգայնացումը	9
Որակյալ կրթություն. Ձեռնահասությունների վրա հիմնված ուսումնառություն	11
Ուսանողների զբաղվունակության կարևորումը.....	13
Գործատուների ակնկալիքները	16
ԳԼՈՒԽ 2. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ	19
Շրջանավարտներ և ուսանողներ. քանակական հետազոտության մեթոդաբանություն.....	19
Դուբլինյան դեսկրիպտորների հենքի վրա կառուցված շրջանավարտների գնահատումը.....	20
Գործատուներ. որակական հետազոտության մեթոդաբանություն	24
Հետազոտության սահմանափակումները.....	25
ԳԼՈՒԽ 3. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	26
Բուհի ավանդական շուկան.....	26
Պրակտիկան դեռևս չի ծառայում իր նպատակին	29
Կրթությունը ազդում է զբաղվածության վրա	30
Որակի՝ որպես բրենդի զարգացումը հրատապ է.....	32
Որակի ապահովումն առանց դասախոսների մասնակցության հնարավոր չէ.....	34
Ձեռնահասությունների ձևավորումը՝ որպես մարքեթինգային գործիք.....	37
Լեզվի իմացությունից դեպի բարձրակարգ մտածողություն	40
Բուհը շուկայի առաջընթացի երաշխավորողներից մեկն է.....	41
ԳԼՈՒԽ 4. ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ	43
Գրականության ցանկ.....	46

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

2009 թվականի ամռանը Եվրասիա հիմնադրամի աջակցությամբ ԵրՊԼՀ-ի համար Ծաղկաձորում երկու փուլով Հայկական մեթոդաբանական դպրոցը կազմակերպեց կազմակերպագործունեական խաղ: Դրա նպատակն էր բացահայտել այն սկզբունքները, նպատակներն ու մեխանիզմները, որոնք թույլ կտան համալսարանին առաջանցիկ զարգացում ապահովել և ամեն ինչից զատ հանդիսանալ մշակութային շուկայի լիարժեք դերակատար: Խաղի արդյունքների հիման վրա ԵրՊԼՀ որակի ապահովման կենտրոնը սկսեց ներքին իրավիճակի վերլուծության աշխատանքները, որի արդյունքում պարզ դարձավ աշխատանքի շուկայի և ԵրՊԼՀ շրջանավարտների զբաղեցրած դիրքի ու որակական առանձնահատկությունների վերլուծության անհրաժեշտությունը: Ավելին, Բարձրագույն կրթության ռազմավարական հետազոտությունների ազգային կենտրոնը 2011 թվականին Բոլոնիայի գործընթացի շրջանակներում ՀՀ բարձրագույն կրթության համակարգում իրականացված բարեփոխումների արդյունքների վերլուծությամբ պարզեց, որ բուհերի մեծամասնությունը որևէ կապ չունի շրջանավարտների հետ: Որպես կանոն բուհերի որակի ապահովման գործընթացում շրջանավարտները ներգրավված չեն: *Բաց Հասարակության ինստիտուտի աջակցության հիմնադրամի Հայաստանյան մասնաճյուղի* ֆինանսավորման շնորհիվ հնարավոր դարձավ իրականացնել ծրագրավորված հետազոտությունը: Հետազոտության հիմնական նպատակն էր սահմանել բարձրագույն կրթության որակավորումների և աշխատանքի շուկայի պահանջարկի փոխկապակցվածության աստիճանը: Այն նպատակ ուներ բացահայտելու աշխատանքի շուկայի պահանջարկում առկա շեղումները Որակավորումների Եվրոպական Շրջանակի ու Դուբլինյան դեկրիպտորների տեսանկյունից, հասկանալ այն առանձնահատկությունները, որոնք պետք էր հաշվի առնել բարձրագույն կրթության որակի ու համապատասխանության բարեփոխումների իրականացման գործընթացում: Այս ամենի բացահայտման նպատակով հետազոտության շրջանակներում, ԵրՊԼՀ օրինակի վրա փորձ կատարվեց պատասխանել հաջորդիվ ներկայացված հարցերին: Արդյո՞ք բարձրագույն կրթության որակավորումները փոխկապակցված են աշխատանքի շուկայի պահանջարկի հետ: Որո՞նք են աշխատանքի շուկայի պահանջները բուհերի շրջանավարտներին աշխատանքի ընդունելու տեսանկյունից: Ինչպե՞ս են դրանք համեմատվում բարձրագույն կրթության առաջին և երկրորդ մակարդակի որակավորումները նկարագրող Դուբլինյան դեկրիպտորների հետ: Արդյո՞ք բարձրագույն կրթության որակավորումները ազդում են աշխատանքի շուկայի դինամիկայի վրա և գործոն են հանդիսանում շրջանավարտներին աշխատանքի ընդունելիս: Այս հարցերի պատասխանները ձևակերպվել են օգտագործելով ԵրՊԼՀ շրջանավարտների, ավարտական կուրսի ուսանողների հարցման ու սահմանափակ թվով գործատուների հետ անցկացրած հարցազրույցի արդյունքները:

Հետազոտությունը ի ցույց դրեց մի շարք պատճառահետևանքային կապեր, որոնք թե ոլորտի քաղաքականության, թե բուհական պատասխանատուների առջև գոյացնում են մի շարք խնդիրների հրատապ լուծման հրամայականը: *Առաջին*, հրատապ են մասնագիտությունների և, մասնավորապես մասնագիտացումների վերանայումները: Հայաստանյան շուկան շարունակում է սեղմված մնալ, սակայն ուսանողի ձեռնահասությունների ու հմտությունների որոշակի մակարդակը երաշխավորում է շուկայում խորքային ներթափանցում: Այդ նպատակով, բուհը մշտապես պիտի ճշգրտի իր դիրքը աշխատանքի շուկայում և ապագա հնարավոր միտումները, ինչպես նաև մշակի այդ դիրքի բարելավմանն ուղղված միջամտող գործողություններ, ինչպես օրինակ՝ մարքեթինգային ծրագիրը: *Երկրորդ*, բուհը իր ոչ գործնական պրակտիկաներով և հիմնականում տեսական գիտելիքներով դեռևս շոշափելի ազդեցություն չունի ուսանողների զբաղվածության մեծացման վրա: Արտադրական պրակտիկայի արդիականացման ու դրա համապատասխանության բարձրացման նպատակով, բուհը պետք է աշխատանքներ իրականացնի երեք՝ կրթական, կազմակերպչական ու տեղեկատվական հիմնական ուղղություններով: *Երրորդ*, հետազոտության արդյունքում հաստատվեց զբաղվածության փոխկապակցվածությունը կրթության հետ: Շրջանավարտները հաճախ հստակ չեն պատկերացնում, թե ավարտելիս տվյալ որակավորմամբ զբաղվածության ինչպիսի հնարավոր հետագծեր կան գործող շուկայում: Հետևաբար, բուհերը պետք է իրենց առաջիկա ռազմավարական ծրագրում միջազգայնացման խնդրից ելնելով, ներառեն միջոցառումների համախումբ միտված ԿՓԵՀ տեղեկատվական փաթեթի ներդրմանն ու հեռանկարում նաև ԿՓԵՀ պիտակի ձեռքբերմանը: *Չորրորդ*, կրթության որակը լուրջ բրենդ է, որի ձևավորումն ու պահպանումը պետք է մտահոգի բուհի ղեկավարությանն ու անձնակազմին: Հաշվի առնելով այն փաստը, որ կրթության որակի դրական ընկալումը կրթությունը ԵրՊԼՀ-ում շարունակելու նախապայման է հանդիսանում, ապա հրատապ է բակալավրական կրթական ծրագրերի վերանայման ու արդիականացման հարցը, որտեղ հատուկ ուշադրություն պետք է դարձնել արտադրական պրակտիկայի կազմակերպմանը և դրա փոխկապակցվածությանը տվյալ որակավորման վերջնարդյունքների հետ: *Հինգերորդ*, որակավորումների շրջանակի տեսանկյունից վերլուծությունը հաստատում է երկու տարբերակված համալսարանի առկայությունը, որը պահանջում է անձնակազմի կրթական կարիքների ծրագրավորման ռազմավարական մոտեցում: Կրթական վերջնարդյունքների վերաձևակերպումը 2011 թվականին ընդունված ազգային որակավորումների հենքով և 2013 թվականին ծրագրային հավատարմագրման պահանջով պայմանավորված պարտադիր ու հրատապ միջոցառում են դառնում: Սա հանգեցնելու է ըստ որակավորման առարկայական նկարագրերի, ուսումնական պլանի վերանայմանը: Բուհը պետք է նախաձեռնի այդ աշխատանքներին այս պահին ամենապատրաստ որակավորումների ու համապատասխան ստորաբաժանումների փորձարկումը, որի ընթացքում առարկայական նկարագրերում առանձնահատուկ ուշադրության կենթարկվեն կրթական վերջնարդյունքների ձևակերպման առանձնահատկությունները: *Վեցերորդ*, ուսումնառության ընթացքում ձեռնահասությունների թերի ձևավորումը հետագայում ազդում է շրջանավարտների

Ճկունության ու բարձրակարգ կարողականությունների առկայության վրա, որը չի կարող չազդել շուկայում իրենց ունեցած մրցունակության ու զբաղեցրած դիրքի վրա: Այս առթիվ, հարկավոր է պրոֆեսորադասախոսական անձնակազմի համար կազմակերպել մասնագիտական զարգացման դասընթացներ, որոնք միտված կլինեն ուսանողակենտրոն դասընթացի ձևավորման հիմունքների ու կրթական վերջնարդյունքների հասակեցմանը միտված Բյուսի տաքսոնոմիայի սկզբունքների կիրառական դասընթացի մատուցմանը: Արդյունքում դասընթացը ավարտած դասախոսները կվերանայեն իրենց առարակայական նկարագրերը՝ հստակ ձևակերպելով դասավանդման ու հետազոտական աշխատանքների մեթոդաբանությունը: *Յոթերորդ*, թե ընդհանրական հմտությունները, թե մեթոդականները ԵրՊԼՀ-ում բարելավման կարիք ունեն՝ հաշվի առնելով աշխատանքի շուկայի հստակ ձևակերպած պահանջարկը: Սակայն այդ բարելավումը պետք է ունենա կարճաժամկետ և երկարաժամկետ մոտեցումներ: Առաջին հերթին բուհը կրթական ծրագրերի վերանայման ժամանակ պետք է կարևորի ընդհանրական հմտությունների ձևավորումը, մասնավորապես քննադատական մտածողության ու համակարգչային գրագիտության տեսանկյունից, որտեղ պիտի առանձնացվի հատուկ ծրագրային փաթեթների (օրինակ՝ SPSS) իմացությունը: Բուհը պիտի պատրաստվի ապագայի աշխատանքի շուկային, որտեղ անխուսափելիորեն առաջնային պահանջարկվածություն են ունենալու մասնակցային ու մեթոդաբանական հմտությունները, քանի որ համակարգային բարեփոխումները առաջադրում են ավելի բարդ՝ ինքնաուսուցանվող կառուցվածքների գոյացման միտումները: Այս նպատակով բուհի մագիստրոսական կրթական ծրագրերի համար առաջիկա երեք-չորս տարիների ընթացքում պետք է մշակվի ԿՓԵՀ տեղեկատվական փաթեթը, որը թույլ կտա այս բոլոր խնդիրները լուծել համադրված մոտեցման որդեգրմամբ: *Վերջապես*, այս վերլուծության առաջարկությունների ու եզրահանգումների հատվածում նկարագրված նախընտրելի գործողությունների բազմությունից հարկ է առանձնացնել մեկը, որը վերթեմատիկ ու շրջանակային բնույթ ունի՝ *ԿՓԵՀ տեղեկատվական փաթեթը և միջազգայնացման ռազմավարությունը*: Կրթության ոլորտի տարբեր պատասխանատուների համար առաջնահերթ է դառնում միջազգայնացման ռազմավարության որդեգրումը, որը թույլ կտա արդիականացնել կրթությունն ու լուծել որակի ու համապատասխանության առկա խնդիրները: Սակայն, այս ամենի լուծման համար բուհերը պիտի ձեռնամուխ լինեն ԿՓԵՀ տեղեկատվական փաթեթների մշակմանն ու ԿՓԵՀ պիտակի ձեռքբերմանը, ինչը թույլ կտա վերջիններիս համաեվրոպական կրթական տարածքի քարտեզի վրա ամրագրել սեփական ներկայությունը:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի բուհական համակարգը 2005 թվականից ի վեր հայտարարել է համաեվրոպական բուհական համակարգին համարկվելու իր նպատակադրության մասին՝ վավերացելով Լիսաբոնի միջազգայնագիրն ու միանալով Բոլոնիայի գործընթացին: 2011 թվականին ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվել է մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների պետական հավատարմագրման կարգը, որտեղ առանցքային գործընթացը ինքնավերլուծությունն է: 2011 թվականին ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվել է նաև կրթության որակավորումների ազգային շրջանակը, որի գործադրումը պետք է ավարտվի 2013 թվականին: Արդյունքում, բուհերը հավատարմագրմանը նախապատրաստվելու համար պետք է տեղայնացնեն որակավորման շրջանակն ու ըստ որակավորումների մշակեն կրթական վերջնարդյունքները, որոնք պիտի համապատասխանեն շուկային: Սա ենթադրում է, որ ինքնավերլուծական գեկոյցներում բուհերը պիտի կարողանան հստակ ցույց տալ որոշակի որակավորմամբ շրջանավարտների զբաղվածության ոլորտն ու մակարդակը, բացի այդ հեռանկարում ապահովելով *զբաղվունակությունն* ապահովող համակարգի գործառնությունը:

Բարձրագույն կրթության ռազմավարական հետազոտությունների ազգային կենտրոնը 2011 թվականին Բոլոնիայի գործընթացի շրջանակներում ՀՀ բարձրագույն կրթության համակարգում իրականացված բարեփոխումների արդյունքների վերլուծությամբ պարզեց, որ բուհերի մեծամասնությունը որևէ կապ չունի շրջանավարտների հետ: Որպես կանոն բուհերի որակի ապահովման գործընթացում շրջանավարտները ներգրավված չեն: Վերջիններիս հաշվառումը իրականացվում է փոքրաթիվ բուհերում, այն էլ հատվածաբար: Կրթական հաստատությունների կեսը նշել էր պոտենցյալ գործատուների բազայի մասին, սակայն հաշվի առնելով այն փաստը, որ շրջանավարտների հետ կապը բացակայում է, իսկ տեղեկատվական համակարգը որպես կանոն չի գործում, հասկանալի չէ, թե ինչպես է գործադրվում գործատուների բազան: Բացառություն էին կազմել բուհերի մեկ-երրորդը, որտեղ գործատուների հետ պարբերական միջոցառումներ էին իրականացվել: Դժվար է պատկերացնել բուհի կրթության որակի համապատասխանության մասին հիմնավորումը, եթե առկա չէ շրջանավարտների մշտադիտարկման ու գնահատման մշտական գործող համակարգ: Այն թույլ կտար հասկանալ շուկայի միտումները, ըստ այդմ արձագանքելով և արդիականացնելով կրթական ծրագրերի բովանդակությունը՝ պահպանելով որակավորումների ազգային շրջանակառվ սահմանված նպատակները:

Այս ամենի լույսի ներքո արդիական էր դառնում շրջանավարտների հարցումների միջոցով գնահատել կրթության նպատակի, դրա որակի ու համապատասխանության խնդիրները՝ այն իրականացնելով մեկ բուհի, այս դեպքում ԵրՊԼՀ-ի օրինակի վրա:

Հետազոտության հիմնական նպատակն էր սահմանել բարձրագույն կրթության որակավորումների և աշխատանքի շուկայի պահանջարկի փոխկապակցվածության աստիճանը՝ օգտագործելով ԵրՊԼՀ տվյալները: Այն նպատակ ուներ բացահայտելու աշխատանքի շուկայի պահանջարկում առկա շեղումները Որակավորումների եվրոպական շրջանակից, որը ազգային շրջանակի հիմնարար տարբերակն է և ըստ պահանջի համադրելի, ու Դուբլինյան դեսկրիպտորների տեսանկյունից, հասկանալ այն առանձնահատկությունները, որոնք պետք էր հաշվի առնել բարձրագույն կրթության որակի ու համապատասխանության բարեփոխումների իրականացման գործընթացում: Բուհական մակարդակում, ներքին սպառման նպատակով, այս հետազոտությունը թույլ կտա բացահայտել կրթական ծրագրերի ու արդյունքների փոխկապակցվածության աստիճանը զբաղվունակության հետ: Բացի այդ, այս հետազոտության անհրաժեշտությունը պայմանավորված է բուհի ինքնագնահատման մեջ վերջինիս պարտադիր բաղադրիչ հանդիսանալու գործոնով և ներքին որակի ապահովման պահանջով: Հետագայում, հետազոտության մեթոդաբանությունը և արդյունքները կարող են օգտագործվել շարունակականության ապահովման և ֆակուլտետային մակարդակում նմանատիպ հետազոտությունների իրականացմամբ: Վերջապես, այս հետազոտության երկրորդային ազդեցությունը կհանդիսանա ԵրՊԼՀ կարիերայի կենտրոնում հետազոտական հզորությունների ձևավորմանն աջակցելը:

Հայաստանի աշխատանքի շուկան գրանցում է գործազրկության զգալի մակարդակ, ինչպես նաև պահանջարկի ու առաջարկի միջև կառուցվածքային անհամապատասխանության առկայություն: Նման պատկերի առկայությունը կարող է մատնանշել, որ, հավանաբար կան որոշակի խնդիրներ բարձրագույն կրթության համապատասխանության, ինչպես նաև աշխատանքի շուկայի պահանջարկի ու բուհի արդյունքների միջև կառուցվածքային անհամապատասխանության առումով: Այս ամենի բացահայտման նպատակով հետազոտության շրջանակներում, ԵրՊԼՀ օրինակի վրա փորձ կատարվեց պատասխանել հաջորդիվ ներկայացված հարցերին: Արդյո՞ք բարձրագույն կրթության որակավորումները փոխկապակցած են աշխատանքի շուկայի պահանջարկի հետ: Որո՞նք են աշխատանքի շուկայի պահանջները բուհերի շրջանավարտներին աշխատանքի ընդունելու տեսանկյունից: Ինչպե՞ս են դրանք համեմատվում բարձրագույն կրթության առաջին և երկրորդ մակարդակի որակավորումները նկարագրող Դուբլինյան դեսկրիպտորների հետ: Արդյո՞ք բարձրագույն կրթության որակավորումները ազդում են աշխատանքի շուկայի դինամիկայի վրա և գործոն են հանդիսանում շրջանավարտներին աշխատանքի ընդունելիս: Այս հարցերի պատասխանները ձևակերպվել են օգտագործելով ԵրՊԼՀ շրջանավարտների, ավարտական կուրսի ուսանողների հարցման ու սահմանափակ թվով գործատուների հետ անցկացրած հարցազրույցի արդյունքները:

Ներկայացված վերլուծության մեջ առաջին գլխում ներկայացված են նմանատիպ հետազոտությունների հիման վրա ձևավորված դատողությունները, որոնք

հնարավոր են դարձնում սահմանված հարցերի պատասխանների ձևակերպումը: Երկրորդ գլխում ներկայացված է շրջանավարտների, ուսանողների և գործատուների հետ իրականացված հարցումների առանձնահատկությունները և հետազոտության ընդհանուր մեթոդաբանությունը: Երրորդ գլխում ներկայացված են հիմնական արդյունքներն, որոնց հիման վրա ձևակերպվել են քաղաքականության հնարավոր ուղղությունների առաջարկությունները: Վերջապես, արդյունքները և հիմնական առաջարկությունները համադրվել են եզրահանգումների հատվածում՝ հիմնական դերակատարների համար առաջարկելով համապարփակ քաղաքականության որդեգրման անհրաժեշտությունը:

ԳԼՈՒԽ 1. ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄՆ ՈՒ ԶԲԱՂՎՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Բարձրագույն կրթության միջազգայնացումը

90-ականներից ի վեր բարձրագույն կրթության պատասխանատուների քննարկումներում հաճախ խոսք էր գնում բարձրագույն կրթության միջազգայնացման մասին: Տեղեկատվական տեխնոլոգիաների, տնտեսության, գիտելիքի, մարդկանց, հիմնական գաղափարների ու արժեքների ազատ և արագ ներթափանցումը մեկ մշակույթից մյուսը, պայմանավորված լինելով հաղորդակցական հոսքերի աննախադեպ արագությամբ, մեծ ազդեցություն գործեցին տարբեր երկրների տնտեսության կազմակերպման, արժեքային սկզբունքների վերասահմանման ու ինքնագիտակցության փոխակերպման վրա: Այս գործընթացներից անմասը չմնաց կրթության համակարգը, որտեղ բարձրագույն ուսումնական հաստատությունները առանցքային դերակատարություն ունեին: Եթե նախկինում փակ համակարգերում, ինչպիսին էր օրինակ՝ սովետական տնտեսությունը, հնարավոր էր ապահովել համապարփակ ու ինքնաբավ կրթություն, ապա բաց հասարակության պայմաններում այդ համակարգի վրա սկսեցին կրիտիկական ուժով ներգործել տարբեր ներքին և արտաքին գործոններ, որոնք առաջացրին փոփոխվելու ու զարգանալու անհրաժեշտությունը: Մասնավորապես, բաց տնտեսական հարաբերությունների հաստատումը պարտադրեց արտադրական գործընթացների արդիականացում, որը ենթադրում էր առաջավոր փորձի կիրառում և նորարարությունների գործադրում: Այն իր հերթին ներգործեց կրթական համակարգի վրա, գոյացնելով պահանջ, երբ հարկավոր էր արագ ադապտացնել առկա գիտելիքն ու դրա հենքի վրա զարգացնել նոր մոտեցումներ, ինչպես նաև կիրառության համար պատրաստ ապրանքներ ու ծառայություններ: Այս գլոբալացման արդյունքում, որպես պատասխան բարձրագույն կրթական համակարգը սկսեց միջազգայնանալ, (ՏՀԶԿ, 1999):

Վերջին տարիների ընթացքում միջազգայնացման կարևորության գիտակցման հետ մեկտեղ ձևավորվել են դրա գործադրման մի շարք մոտեցումներ: Այդ մոտեցումներից մեկը արդյունքահանենք է և շեշտադրում է ձեռնահասությունների /կոմպետենցիաների/ սահմանման մեթոդաբանությունը, (ՏՀԶԿ, 1999): Այս դեպքում կրթության որակը գնահատվում է ուսանողների գիտելիքների, հմտությունների, հետաքրքրությունների, արժեքների ու մոտեցումների՝ մարդկային գործոնի տեսանկյունից, որտեղ նաև դիտարկվում են թե պրոֆեսորադասախոսական, թե վարչական կազմը, (ՏՀԶԿ, 1999): Նշված համատեքստում միջազգայնացված կրթական ծրագրերի ու առարկայական նկարագրերի անհրաժեշտությունը ինքնանպատակ չէ, այլ ունի քաղաքական, տնտեսական և սոցիալական հիմնավորումներ: Չնսեմացնելով քաղաքական հիմնավորման դերը, այս

հետազոտության տեսանկյունից կքննարկվի միայն տնտեսական գործոնը և, մասնավորապես դրա բաղկացուցիչ մասը կազմող աշխատանքի շուկան:

Միջազգայնացման գործում տնտեսական հիմնավորվածության դերը շեշտակիորեն աճել է: Տնտեսությունների գլոբալացման արդյունքում, երբ պայմանավորված տեղեկատվական տեխնոլոգիաների առաջընթացով աննախադեպ հնարավորություններ են գոյանում և էլ ավելի խորացնում երկրների միջև առկա կախվածությունը, ազատ տնտեսական հարաբերությունները պարտադրում են տնտեսության մրցունակության անհրաժեշտությունը, ստիպելով պետություններին էլ ավելի մեծ ուշադրություն դարձնել սեփական գիտական և տեխնոլոգիական զարգացմանն ու արդիականության շարունակականությանը, (ՏՀԶԿ, 1999): Այդ շարունակականության արդյունավետ լուծումը թաքնված է բարձրակարգ գիտելիքներով օժտված և ձեռնահաս աշխատուժի պահպանման ու նոր շրջանին համարժեք զարգացման միջոցով մրցունակ տնտեսության առկայության մեջ, (ՏՀԶԿ, 1999): Այս վերջին հրամայականն էլ խթանում է բարձրագույն կրթության միջազգայնացման գործընթացը թե տեղական, թե տարածաշրջանային մակարդակներում: Այն ստիպում է բուհերին վերանայել սեփական մոտեցումները և որդեգրել շուկայում ակտիվ դերակատարին ներհատուկ խաղի կանոններ, ինչն էլ վերասահմանում է կրթության որակի հասկացությունը, դրան ավելացնելով նաև շուկայի պահանջներին համապատասխանելու անհրաժեշտությունը:

Վերջին շրջանի միտումները հստակ նշմարում են աշխատանքի շուկայի միջազգայնացում և միգրացիոն հոսքերի ծավալների մեծացում: 1990-ականներից ի վեր Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի միգրացիոն հոսքերը պայմանավորված են մի շարք գործոններով: Այս շրջանի երկրների բնակչության կազմում 35 միլիոն մարդ ունի օտարերկրյա ծագում, (Համաշխարհային բանկ, 2004): Միգրանտների քանակով Ռուսաստանը միայն զիջում է ԱՄՆ-ին, որտեղ մեծ կշիռ ունի տնտեսական միգրացիան, (Համաշխարհային բանկ, 2004): Ռուսաստանի Դաշնություն ներգաղթածների 75 տոկոսը ԱՊՀ երկրներից են, (Համաշխարհային բանկ, 2004): Հաշվի առնելով մեկ շնչին բաժին ընկնող եկամտի տարբերությունները, Հարավ Կովկասյան երկրների երիտասարդները առաջիկայում ևս աշխատանքի փնտրտուքի տեսանկյունից իրենց հայացքն ուղղելու են հյուսիս, (Համաշխարհային բանկ, 2004): Սա կրթության և, մասնավորապես բարձրագույն կրթության կազմակերպման, դրա միջազգայնացման անհրաժեշտության տեսանկյունից տվյալ տարածաշրջանի առանձնահատկությունները հաշվի առնող որոշակի պահանջներ է ձևավորում: Շուկայի պահանջներին բավարարելու անհրաժեշտությունը ոչ միայն միջազգայնացող շուկայի պահանջներին բավարարելու անհրաժեշտությամբ էր պայմանավորված, այլ այդ գիտակցության առաջացման նախապայմաններով: Դրանցից գլխավորը կրթության ֆինանսավորման վերափոխումն էր, երբ տնտեսության կառուցվածքային բարեփոխումների տարիներին, նախորդելով շուկայի ամբողջական ազատականացման ապահովմանը, պետությունը ստիպված եղավ շեշտակի կրճատել բարձագույն կրթության ֆինանսավորումը: Սա ստիպեց

հայաստանյան բուհերին մտածել ինքնաձայնումն ապահովող միջոցառումների մասին, ինչն էլ ստիպեց աստիճանաբար համապատասխանեցնել համալսարանական կրթությունը աշխատանքի շուկայի պահանջներին: Մասնիրաժեշտ էր բուհի գրավչությունը պահպանելու և մեծացնելու համար, քանի որ ֆինանսական հոսքերի մեծ մասը սկսեց գոյանալ ուսման վարձից, ինչն էլ նույնիսկ կայացող աշխատանքի շուկայում կարևորում է շրջանավարտի աշխատանք գտնելու արդյունավետությունը, լինի դա տեղական, թե այլ շուկաներում:

Կրթական որակավորումների որպես կրթական ծառայության շուկա արտահանելու և հետևաբար դրա մրցունակ լինելու անհրաժեշտությունը Հայաստանում գիտակցվեց այս վերջին տարիների ընթացքում, երբ ինչպես արդեն նշվեց, պետության պատվերը շեշտակի նվազեց: Սակայն, բարձրագույն կրթության արդյունք է ոչ միայն կրթական այս կամ այն որակավորումը, այլ նաև հետազոտական, լրացուցիչ կրթական, նորարարական կիրառական ապրանքներն ու ծառայությունները, որոնք շատ բուհերի կողմից գիտակցվել են և դիտարկվում են որպես լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավման հնարավորություն: Մա էլ իր հերթին ստիպում է ավելի միջազգայնացնել բարձրագույն կրթության առաջարկվող արդյունքները: Մա նոր մարտահրավերներ է առաջադրում թե բուհի, թե հասարակության առջև: Մասնավորապես, հարկ կա քննարկելու շահեկիցների դերը կրթության կառավարման, դրա որակի ու համապատասխանության բարելավման գործում: Որպես շուկայում հանդես եկող դերակատար և որոշակի ապրանքներ ու ծառայություններ առաջարկող կազմակերպություն, բուհը ստիպված է հաշվի նստել այդ առաջարկը սպառողների պահանջների հետ: Դրանցից են մասնավոր սեկտորի կազմակերպությունները, որոնք սպառում են թե կրթված մարդուժը, թե տարրատեսակ նորարարություններ պարունակող կիրառական ապրանքներն ու ծառայությունները, (ՏՁԿ, 1999): Հետազոտության տեսանկյունից մյուս շահեկիցների խմբից առանձնացված մասնավոր սեկտորը հիմնականում ունի տնտեսական շահագրգռվածություն բուհի առաջարկած որոշակի ապրանքների ու ծառայությունների սպառման առումով: Այստեղ, աշխատանքի շուկայի ենթաբաղադրիչը առանձին տեղ է հատկացնում շրջանավարտի ստացած գիտելիքների ու հմտությունների արդիականությանն ու պահանջարկվածությանը, որը տեսականորեն ձևակերպում է գործատուն՝ հետադարձ կապի միջոցով ազդելով բուհի կրթական ծրագրերի ու դասավանդվող առարկաների, ինչպես նաև մեթոդների վրա:

Որակյալ կրթություն. Ձեռնահասությունների վրա հիմնված ուսումնառություն

Ներկայումս գերակշռում են այն հիմնավորումները, որոնց համաձայն բարձրագույն կրթությունը պետք է հենված լինի տնտեսական արդյունավետության ու արդարության վրա, (Prokou, 2008): 80-ականներից ի վեր Արևմտյան Եվրոպայի երկրներում բարձրագույն կրթության պլանավորման շեշտադրումը մուտքային

փոփոխականներից տեղափոխվեց ելքային փոփոխականների վրա, ինչը միտված էր բավարարելու շուկայի կարիքները, (Prokou, 2008): Այս փոփոխությունները վերաձևակերպեցին բարձրագույն կրթության և արտադրության միջև հարաբերությունները: Արևմտյան համալսարանների ինքնավարությունը սկսեց խարխլվել, քանի որ տնտեսական տարրի գերակայության պայմաններում քաղաքականությունը, մշակույթը, հասարակությունը ստորադասվեցին տնտեսական գլոբալացման հիմնավորումներին, թույլ տալով շուկային միջամտել համալսարանական հարցերին՝ հիմնավորելով մարդկային ներուժի համարժեքության անհրաժեշտությունը ավելի մեծացող միջազգային տնտեսական մրցակցության պայմաններում, (Prokou, 2008):

Գլոբալացման գործընթացը բարձրագույն կրթության առջև նոր մարտահրավերներ առաջացրեց: Եվրոպական տարածքի մշակութային, հասարակական, գիտական և տեխնոլոգիական ներկայությունը պահպանելու նպատակով 1999 թվականին մի շարք երկրներ ստորագրեցին Բոլոնիայի հռչակագիրը, (Sirca et al, 2006): Դրան հաջորդող բոլոր հանդիպումներում (Պրագա (2001), Բեռլին (2003), Բերգեն (2005)) քննարկվում էր Եվրոպայի գիտելիքահենք ապագան, որի հիման վրա էլ փաստարկվում էր բարձրագույն կրթության բարեփոխումների անհրաժեշտության գաղափարաբանությունը: Բարձրագույն կրթության համեմատելիության ու համադրելիության համար անհրաժեշտ մի շարք ուղղությունների ապահովման քննարկումներում նաև խոսք էր գնում աշխատանքի շուկայում պահանջարկված բարձրագույն ուսումնական հաստատություններում ձևավորվող հմտությունների ու ձեռնահասությունների հարմոնիզացման մասին, (Sirca et al, 2006): Համապատասխանելիությունը աշխատանքի շուկայի պահանջներին դարձավ անհերքելի պայման, որը սկսեց ձևավորել բարձրագույն կրթության բովանդակության ու ակնկալվող արդյունքների նոր հայեցակարգ:

Եվրոպական տարածքում բարձրագույն կրթության համադրելիության ու համեմատելիության հրամայականը պարտադրեց, որպեսզի որակավորումների նկարագրերը փոխընթեռնելի լինեն: Պրագայում նախարարների հանդիպման արդյունքում արձանագրվեց, որ բարձրագույն կրթությունը պետք է թափանցիկ լինի, որպեսզի աստիճանաշնորհումը փոխձանաչելի լինի և հեշտացնի ուսանողների շարժունակությունը: Հետևաբար, Որակի միասնական նախաձեռնության ներքո 2004 թվականին բարձրագույն կրթության փորձագետների մի խումբ մշակեց նկարագրերը, որոնք այսօր հայտնի են որպես Դուբլինյան դեսկրիպտորներ¹: Դուբլինյան

¹ Բարձրագույն կրթության առաջին մակարդակի դեսկրիպտորները այդ որակավորումը ստացած ուսանողների իմացության, հմտությունների ու ձեռնահասության հետևյալ շրջանակն են սահմանում՝ ա) ունեն համապատասխան գիտելիքներն ու ընկալումը իրենց մասնագիտության ոլորտում, բ) կարող են կիրառել այդ գիտելիքներն ու ընկալումն այնպես, որ այն կփաստի սեփական գործի նկատմամբ մասնագիտական մոտեցման մասին, ունեն համապատասխան ձեռնահասություններ իրենց մասնագիտական ոլորտում առաջացած խնդիրները լուծելու համար, գ) կարող են հավաքել և մեկնաբանել վիճակագրական տվյալներ, որոնք կօգտագործեն համարժեք դատողություններ

դեսկրիպտորները² ակնկալվող արդյունքների ու ընդունակությունների ընդհանրական նկարագրեր են, որոնք փոխկապակցված են կրթական աստիճանների որակավորումների հետ: Սրանք նվազագույն շեմեր չեն սահմանում, փոխարենը նկարագրում են արդյունքների ամբողջական շրջանակը, որի հենքի վրա էլ կառուցվում են առանձին որակավորումների արդյունքներն ու բովանդակությունը: Այս շրջանակի սահմանումը՝ որպես նախապայման նաև ենթադրում է կրթական ծրագրերի այնպիսի կառուցվածք, որը թույլ կտա *զբաղվունակության* բարձր մակարդակ ունեցող շրջանավարտների ձևավորումը համապատասխան հմտությունների ու ձեռնահասությունների միջոցով: Այդպիսով այս շրջանակային նոր պայմաններում ձեռնահասությունները վեր են ածվում շուկայական արդյունքի, որը առաջարկվում է բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից: Ձեռնահասությունները նաև կարևոր են, քանի որ մեծացնում են անհատների մասնակցությունը ժողովրդավարական գործընթացներին, մեծացնում են սոցիալական համերաշխությունը և արդարությունը, ամրացնում են մարդու իրավունքների գիտակցումն ու կիրառությունը, (Sirca et al, 2006):

Ուսանողների զբաղվունակության³ կարևորումը

Ետարդյունաբերական, արագ միջազգայնացող տնտեսությունները հաճախ բնորոշվում են որպես մրցակցային ու գիտելիքահեղձ, ինչն էլ լրացուցիչ պահանջներ է առաջադրում նորօրյա համատեքստում գործող բարձրագույն ուսումնական

ձևակերպելու համար՝ ներառելով համապատասխան սոցիալական, գիտական և էթիկական հարցերը, դ) կարող են փոխանցել տեղեկատվությունը, գաղափարները, առկա խնդիրները և դրանց լուծումները թե մասնագետներին, թե այլ մարդկանց, ե) ձևավորել են ինքնակրթվելու հմտություններ, (Բոլոնիայի որակավորումների աշխատանքային խումբ, 2005):

² Բարձրագույն կրթության երկրորդ մակարդակի դեսկրիպտորները այդ որակավորումը ստացած ուսանողների իմացության, հմտությունների ու ձեռնահասության հետևյալ շրջանակն են սահմանում՝ ա) որպես կանոն ունեն առաջին մակարդակի վրա հենված ընդլայնված համապատասխան գիտելիքներն ու ընկալումը իրենց մասնագիտության ոլորտում, որը հնարավորություն է ընձեռում դրանց հիման վրա ձևավորել և/կամ կիրառել նոր գաղափարներ, հաճախ դրանք իրականացնելով հետազոտական համատեքստում,բ) կարող են կիրառել այդ գիտելիքներն ու ընկալումը, ինչպես նաև խնդիրներ լուծելու կարողությունները նոր, հաճախ անձանոթ ու միջառարկայական համատեքստում՝ իրենց մասնագիտական ոլորտում առաջացած խնդիրները լուծելու համար, գ) կարող են համարկել գիտելիքները և գործ ունենալ տարբեր բարդության աստիճանների հետ, ձևակերպել դատողություններ հիմնվելով սահմանափակ կամ ոչ ամբողջական տեղեկատվության վրա, որոնք նաև շոշափում են սոցիալական ու էթիկական պատասխանատվությունը կապված այդ դատողությունների ու գիտելիքի կիրառության հետ, դ) կարող են հստակ փոխանցել իրենց գիտելիքները և թեզերի հիմնավորումները թե մասնագիտական, թե ոչ մասնագիտական շրջանակներին, ե) կարող են ինքնուրույն շարունակել ուսումնառության գործընթացը հիմնականում ինքնավար աշխատանքային ռեժիմում, (Բոլոնիայի որակավորումների աշխատանքային խումբ, 2005):

³ Զբաղվունակությունը զբաղվածությունից տարբերվում է և սահմանվում որպես անհատի շարունակական զբաղվածության կարողության առկայություն, որը անգլերեն employability տերմինի հայերեն համարժեքն է:

հաստատություններին՝ հիմնավորելով այն երկրի բարգավաճման անհրաժեշտությամբ, (Moreau and Leathwood, 2006): Այս պայմաններում երկրների կառավարությունները առանձնակի կարևորություն են տալիս շրջանավարտների զբաղվունակությանն ու լրացուցիչ պատասխանատվություն դնում բուհերի ուսերին, (Moreau and Leathwood, 2006): Այս ամենին գումարվում է նաև համալսարանական կրթության մասսայականացման միտումը զարգացած երկրների շրջանում (Purcell, Morely, and Rowley, 2002), որտեղ բարձրագույն կրթության մակարդակում ներգրավվածների տոկոսային հարաբերակցությունը այդ տարիքի երիտասարդների հետ միջինում կազմում է 60 տոկոս: Այս միտումը նաև խրախուսվում է նորանկախ ու զարգացող երկրներում, քանի որ գիտելիքահենք տնտեսության տրամաբանությունը պահանջում է բարձրակարգ գիտելիքներ ունեցող հմուտ աշխատուժ: Իսկ որպեսզի այդ երկրները կարողանան մրցունակ լինել միջազգայնացող տնտեսական հարաբերությունների պայմաններում, ապա ստիպված են ավելի լայն շերտերի համար ապահովել բարձրագույն կրթության մատչելիությունը: Էլիտարության մոտեցման փոխարինումը ավելի լայն հասվածների ներգրավմամբ՝ բուհերի միջև առաջացնում է լրացուցիչ մրցակցություն և համապատասխանաբար կարևոր է դառնում շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ վիճակագրություն ու նրանց զբաղվունակության գնահատումը, որպես որակյալ կրթության բաղկացուցիչ և հետևաբար նաև գրավչության նախապայման: Այս ամենին զուգահեռ՝ վերջին 20 տարիների ընթացքում լուրջ փոփոխության է ենթարկվել աշխատանքի շուկան, հետևաբար նաև զբաղվածության նկարագրերը, որոնք որակավորումը դիտարկում են որպես նախապայման, նույնիսկ այն դեպքերում, երբ նախկինում այդ նույն աշխատանքի համար կրթական որակավորում չէր պահանջվում, (Scott, 1995): Նման պայմաններում աշխատանքի շուկան դառնում է ավելի հոսուն և անկայուն, երբ անհատի վստահությունը, որ կկարողանա նախ աշխատանք գտնել, ապա նաև տարիներ շարունակ միննույն տեղում աշխատել խարխիվել է, (Heery and Salmon, 2000): Աշխատանքի շուկայի հոսունությունն ու բարձրագույն կրթության մասսայականացումը մեծացրել է շրջանավարտների և այդպիսով նաև բուհերի միջև միջնորդավորված մրցակցությունը: Այս ամենը կրթական ծառայությունների միջազգայնացող շուկայի պայմաններում էլ ավելի են մեծացնում ճնշումները բուհերի վրա, ստիպելով մտահոգվել շրջանավարտների զբաղվածությանն աջակցելու ուղղակի և զբաղվունակությունը ձևավորող բաղադրիչների ձևավորման միջոցով անուղղակի միջոցների գործադրման անհրաժեշտությամբ: Չարմանալի չէ, որ բարձրագույն ուսումնական հաստատությունները աստիճանաբար իրենց ուշադրությունը սևեռել են այնպիսի հմտությունների և ձեռնահաստությունների ձևավորման վրա, որոնք թույլ կտան իրենց շրջանավարտներին լինել մրցունակ կարճաժամկետ և երկարաժամկետ առումով, այդպիսով լուծելով վերջիններիս, թե *զբաղվածության*, թե *զբաղվունակության* խնդիրը:

Վերջին տարիներին հաճախակի են դարձել քննարկումներն ու ձեռնարկվող միջոցառումներն, որոնք միտված են բարձրագույն կրթության չափորոշիչներում նկարագրել կրթական արդյունքները: Դրանք, մասնավորապես պայմանավորված են

Բոլոնիայի գործընթացով նկարագրված համաեվրոպական բարձրագույն կրթության տարածքի ձևավորմանն ուղղված միջոցառումներում Հայաստանի ներգրավված լինելու հանձնառությամբ: Այս գործընթացի շրջանակային փաստաթղթերից մեկը՝ Որակավորումների համաեվրոպական շրջանակը, որի մասին առավել հանգամանալից կիսովի հաջորդիվ, պահանջում է, որպեսզի կրթական ծրագրերը հստակ սահմանեն ուսանողի կողմից տվյալ որակավորումը ստանալու համար յուրացվելիք կրթական արդյունքները: Կրթական չափորոշիչների նման արմատական փոփոխությունը պայմանավորված է եղել գիտելիքահենք տնտեսության պահանջներին բավարարելու պահանջով, որտեղ «ցկյանս աշխատանքի» հասկացությունը փոխարինվել է «ցկյանս զբաղվածության» ապահովման անհրաժեշտությամբ՝ գոյացնելով նաև «ցկյանս կրթվելու» հրամայականը: Արդյունքում, շատ բուհեր փորձում են իրենց կրթական ծրագրերում հստակ նկարագրել հմտությունները, (Atlay and Harris, 2000; Chapple and Tolley, 2000; Harvey *et al.*, 2002): Աշխատաշուկայի հետազոտությունները մյուս կողմից, ցույց են տվել, որ գործատուները հաճախ ավելի են կարևորում ընդհանրական հմտությունները /օրինակ՝ հաղորդակցական ու թիմային աշխատանքի հմտությունները/, ինչպես նաև անհատի որակները /օրինակ՝ կամքն ու նվիրումը սեփական գործին/, (Purcell, Morely, and Rowley, 2002): Որոշ հետազոտություններ էլ մատնանշում են, որ աշխատանքի ընդունելիս գործատուները հաճախ մասնագիտական որակավորման փոխարեն նախապատվությունը տալիս են անհատական որակներին, (Scott, 1995): Այս փոփոխությունները միանշանակ չեն ընկալվել բուհական համայնքի կողմից: Հետազոտությունները առաջարկում են, որ վերջիններս հմտությունների վրա հենված կրթության ապահովումը համարել են ոչ ճկուն, իմացական առումով ավելի նեղ և ակադեմիական ազատությունները սահմանափակող մոտեցում, (Brown and Hesketh, 2004): Հմտությունների դերը ավելի է մեծացել կառավարչական, ադմինիստրատիվ և ծառայության ոլորտի զբաղվածության կառուցվածքում, (Purcell, Morely, and Rowley, 2002): Այս միտումը սկսել է նկատվել դեռևս 70-ականներից՝ հասնելով իր գագաթնակետին 90-ականներից հետո ընկած ժամանակահատվածում, (Bourdieu and Passeron, 1964, 1970):

Հմտությունների վրա հենված զբաղվածության ընկալումը աստիճանաբար ծանրության կենտրոնը համակարգից փոխադրում է անհատի վրա, (Brown and Hesketh, 2004): Եթե անցյալում խոսվում էր կառուցվածքային գործազրկության մասին, ապա հիմա առավել հաճախ գործազրկությունը բացատրվում է անհատի մոտ անհրաժեշտ հմտությունների բացակայությամբ և դրանց ձևավորման համար ֆորմալ ու ոչ ֆորմալ կրթության կազմակերպման անհրաժեշտությամբ: Սա պատասխանատվության բեռը փոխադրում է անհատի վրա, որը՝ որպես կրթական ծառայությունների սպառող, այդպիսի ծառայություններ մատուցող հաստատություններից պահանջում է համապատասխան երաշխիքներ: Այս փոփոխությունները ստիպում են համալսարաններին էլ ավելի հստակ նկարագրել իրենց ծրագրերի կրթական արդյունքները և ավելին: Ներկայումս, նոր կրթական ծրագիր ծրագրավորելիս բուհերը ավելի հաճախ են մտածում այն մասին, թե այդ

ծրագրի շրջանավարտը շուկայի ո՞ր հատվածում կկարողանա տեղ զբաղեցնել: Այսօր, բուհերը այդ ամենին զուգահեռ նաև նկարագրում են, թե այս կամ այն ծրագրի շրջանավարտները, որպես կանոն, որտե՞ղ են աշխատում կամ հիմնականում կիրառական ի՞նչ խնդիրներ են լուծում: Եթե մինչ օրս բուհը ապահովում էր անհատի պատրաստվածությունը, հասարակական-մասնագիտական կյանքին լիարժեք մասնակցելու առումով, ապա վերջին զարգացումները ցույց են տալիս, որ բուհերի առջև պահանջ է դրվում ձևակերպել և իրականացնել այնպիսի կրթական ծրագիր, որը *զբաղվունակությունը* երաշխավորող հստակ ներկատուցված տրամաբանություն կունենա, (Cranmer, 2006): Սա ենթադրում է, որ բուհերը պետք է կարողանան հստակ պատկերացնել, թե ներկայումս ի՞նչ տեղ են զբաղեցնում շուկայում, ինչպիսի՞ շուկայի հետ գործ ունեն, արդյո՞ք այն լոկալ է, թե ոչ, որո՞նք են շրջանավարտների զբաղվածության հիմնական ոլորտները և այլն: Այս գիտելիքը կուտակելու համար բուհերից պահանջվում է ձևավորել կայուն գործող հետադարձ կապի համակարգ, որը նաև կունենա ինքնաուսուցանվող տարր՝ ապահովելով բուհի աստիճանական փոխակերպումն ու մրցունակության պահպանումը:

Գործատուների ակնկալիքները

Գիտնականները ուսումնասիրել են աշխատանքի շուկայում բարձրագույն կրթության առաջարկված ձեռնահասությունների պահանջարկի կառուցվածքը մի շարք Եվրոպական երկրներում: Արդյունքները ցույց են տվել, որ առավել մեծ մասնակցային ու մեթոդաբանական գործառույթներ ունեցող աշխատանքի նկարագրերը դրական փոխկապակցվածություն ունեն եկամտի հետ, ինչպես նաև ձեռնահասությունների նկատմամբ բարձր պահանջը դրական փոխկապակցվածություն ունի աշխատանքից բավարարված լինելու հետ, (Garcia-Aracil & Van der Velden, 2008):

Մարդու ձեռնահասությունները ընկալվում են որպես այն տաղանդները, հմտությունները և կարողությունները, որոնցով բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտները նպաստում են բազմազործոն արտադրողականության մեծացմանը և գլոբալացող աշխարհում համարվում են կայուն տնտեսական զարգացման հիմնական տարրերից մեկը, (Sianesi & Van Reenen, 2003): Որոշումներ կայացնողները ավելի են շեշտադրում ձեռնահասությունների կարևորությունն ու դրանց ազդեցությունը արտադրողականության վրա, (Buchel, 2002), դրանց կարևորությունը գլոբալացող շուկայի պայմաններում, ինչպես նաև որոշակի խնդիրների առկայությունը կապված աշխատանքի շուկա նոր շրջանավարտների անցման հետ, (Bradley & Nguyen, 2004): Նոր տեխնոլոգիաների կիրառությունը փոխում է աշխատանքի նկարագրի կառուցվածք, ձեռնահասությունների նկատմամբ պահանջներն ու առաջացնում որոշակի անհամապատասխանություն ձեռնահասությունների առաջարկի ու պահանջարկի միջև, (Garcia-Aracil & Van der Velden, 2008): Այս փոփոխությունները Եվրոպայում բարձրագույն կրթության և շրջանավարտների զբաղվածության

անհամապատասխանության տեսանկյունից որոշակի մտահոգությունների տեղիք են տվել, (Garcia-Aracil & Van der Velden, 2008): Մասնավորապես, անհրաժեշտություն է առաջացել առանձնացնել այն ձեռնահասությունները, որոնք առավել մեծ ազդեցություն ունեն շրջանավարտների մասնագիտական հաջողության վրա, ինչպես նաև հասկանալ, թե ինչպես են դրանք ձևավորվում, (Garcia-Aracil & Van der Velden, 2008):

Եվրոպայի մի շարք երկրներում իրականացված հետազոտությունների արդյունքներն առանձնացրել են ձեռնահասությունների մի շարք խմբեր, որոնցից *ա/ կազմակերպական ձեռնահասությունները* նկարագրում են անկախ աշխատելու, մանրամասների նկատմամբ ուշադիր լինելու, բազմազբաղ պայմաններում աշխատելու կարողությունները, *բ/ մասնագիտացված ձեռնահասությունները* նկարագրում են մասնագիտական ոլորտում անհրաժեշտ գիտելիքների ու ընկալման կիրառմամբ աշխատանքների կատարման համար անհրաժեշտ պատասխանատվության ու որակյալ գործունեության կարողությունները, *գ/ մեթոդաբանական ձեռնահասությունները* նկարագրում են ձեռքբերված փորձառության կիրառմամբ առկա խնդիրներին համարժեք լուծումներ գտնելու կարողությունները, *դ/ ընդհանրական ձեռնահասությունները* նկարագրում են օրինակ՝ բանավոր ու գրավոր հաղորդակցական հմտությունների, ընդհանրական գիտելիքների ու քննադատական մտածողության կիրառության կարողությունները տարբեր համատեքստերում, *ե/ մասնակցային ձեռնահասությունները* նկարագրում են աշխատանքային պատշաճ միջավայրի ձևավորման, այդ թվում պլանավորելու, կանխատեսելու, որոշումներ կայացնելու ու պատասխանատվություն ստանձնելու կարողությունները, *զ/ սոցիալ-զգացական ձեռնահասությունները* նկարագրում են թիմային աշխատանքի ու միջանձնային հաղորդակցության կարևորության ընկալման կարողությունները, (Garcia-Aracil & Van der Velden, 2008): Աշխատանքի շուկայում պահանջարկվածության, ինչպես նաև աշխատավարձի սանդղակում առավել առաջատար տեղեր զբաղեցնելու տեսանկյունից ավելի մեծ կարևորություն ունեն *մասնակցային և մեթոդաբանական ձեռնահասությունները*, որոնց հաջորդում են *սոցիալ-զգացական և ընդհանրական ձեռնահասությունները*, իսկ *մասնագիտացված ձեռնահասությունները* նման դրական փոխկապակցվածության առկայություն չեն արձանագրել, և վերջապես, *կազմակերպական ձեռնահասությունների* առկայությունը նոր շրջանավարտների շուկայում պահանջարկված լինելու և նրանց աշխատավարձի չափի վրա որևէ ազդեցություն չի ունեցել, հետևաբար դա զբաղվունակության գործոն չի հանդիսացել, (Garcia-Aracil & Van der Velden, 2008): Աշխատանքից բավարարվածության տեսանկյունից հաստատվել է դրական փոխկապակցվածություն բոլոր ձեռնահասությունների ու բավարարված լինելու միջև, որտեղ ցանկը գլխավորել են *սոցիալ-զգացական և ընդհանրական ձեռնահասությունները*, (Garcia-Aracil & Van der Velden, 2008): Այսպիսով, դրամական փոխհատուցման մակարդակը մեծապես կախված է այն ձեռնահասությունների առկայությունից, որոնք անհատից պահանջում են կառավարել բարդ իրավիճակներ, դրսևորել առաջնորդելու, անձնապես

ներգրավելու, պատասխանատվություն ստանձնելու կարողություններ, (Garcia-Aracil & Van der Velden, 2008): Հատուկ կարևորություն ունեն մեթոդաբանական ձեռնահասությունները: Այս ամենը ենթադրում է, որ բարձրագույն ուսումնական հաստատությունները պետք է շարունակաբար դիտարկեն աշխատանքի շուկայի փոփոխվող պահանջները և, ըստ այդմ, վերանայեն իրենց մոտեցումը կրթական ծրագրերին ու առաջարկվող որակավորումներին:

ԳԼՈՒԽ 2. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության հիմնական հարցերին պատասխանաբերելու նպատակով ուսումնասիրությունը դիտարկեց Երևանի պետական լեզվաբանական համալսարանի շրջանավարտներին և բակալավրի ու մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնառությունը շարունակող և ավարտական կուրսում սովորողներին: Նախապես ծրագրվել էր շրջանավարտների ցանկում ներառել 2007 թվականից ի վեր ավարտածներին, սակայն տվյալների բազայի ձևավորման փուլում պարզ դարձավ, որ բուհի արխիվացված տվյալների հիման վրա հնարավորություն չի ընձեռնվում կապ հաստատել 2010 թվականից առաջ ավարտածների հետ: Դա բացատրվում է այն փաստով, որ գրանցվել է ուսումնառության ընթացքում նրանց բնակության վայրը: Հաշվի առնելով այն փաստը, որ բուհի ուսանողների մեծ մասը մարզերից է և այդ տվյալները, որպես կանոն, կապ չեն ունեցել մշտական բնակության վայրի հետ, ապա որոշվեց ընտրանքում ներառել միայն 2010 թվականի շրջանավարտներին, որոնք կազմում են 705 մարդ: Բացի այդ, հաշվի առնելով Երևանի պետական համալսարանում նմանատիպ հետազոտության իրականացման փաստը և արդյունքները համադրելու անհրաժեշտությունը, որոշում կայացվեց ԵրՊԼՀ հետազոտության մեջ ընդգրկել նաև ավարտական կուրսերի ուսանողներին: Նախապես այս բաղադրիչը ծրագրված չէր:

Շրջանավարտներ և ուսանողներ. քանակական հետազոտության մեթոդաբանություն

Ուսանողների ու շրջանավարտների հարցումները իրականացվել են հետազոտական հարցերի բացահայտմանն ուղղված մշակված հարցաշարերի միջոցով, որտեղ հարցեր են տրվում թե աշխատանքից բավարարվածության, թե կրթության տարիներին որոշակի ձեռնահաստությունների ձևավորման բուհական գործընթացի մասին: Շրջանավարտների դեպքում հաշվարկվել է 326 հոգանոց ընտրանքի անհրաժեշտությունը, որը սակայն ներկայացուցչական չէ: Այս փաստը առաջացնում է մի շարք խնդիրներ, ինչպիսիք են օրինակ՝ այս հարցումներին արձագանքողների, որպես կանոն, բարձր առաջադիմությունը, պատասխանատվության բարձր մակարդակը և բավարարվածությունը կրթության որակից: 2010 թվականին ավարտած 705 շրջանավարտներից 389-ը մասնակցել են www.surveymonkey.com հետազոտական գործիքի միջոցով իրականացված հարցմանը: Այս ցուցանիշը բավականին բարձր է և կազմում է ընդհանուր խմբի 55.17 տոկոսը: Ներկայացուցչական ընտրանքի դեպքում հարցվածների թիվը պետք է կազմեր 326 մարդ, որը այս դեպքում չլինելով ներկայացուցչական փոխարացվում է այն փաստով, որ ընդհանուր թվի կեսից ավելին մասնակցել է այս հարցմանը և հնարավոր դրական շեղումները կարող են մեղմված լինել: Որպես կանոն նման դեպքերում, երբ հարցմանը մասնակցելը կամ ընտրական բնույթ ունի, ուսումնառության տարիներին ցածր առաջադիմություն ունեցող, տարբեր

պատճառներով ոչ ակտիվ ու ուսամար չշահագրգռված անձինք խուսափում են լրացնել նման հարցումները, առաջացնելով դրական շեղումներ, քանի որ արդյունքում բավարար ու բարձր առաջադիմություն ունեցողների թիվը գերակշռում է: Այս փաստարկի օգտին է խոսում նաև մյուս՝ ուսանողների հարցումների արդյունքները, որտեղ առաջադիմության մասին հարցին պատասխանածների արդյունքների նորմալ բաշխվածությունը ունի թեթև նշմարելի դրական շեղում: Փաստորեն որոշակի շեղումներով հանդերձ շրջանավարտների հարցումների արդյունքները կարելի է համարել ԵրՊԼՀ 2010 թվականին ավարտածների ներկայացուցչական պատկերը, որի հիման վրա կարելի է հավաստի հետևություններ անել: Բայց և այնպես, էլեկտրոնային գործիքի հնարավորությունները օգտագործելով, ըստ առաջադիմության և այլ առանձնացնող բնութագրիչների ֆիլտրվել են բազայում առկա տվյալները՝ լուծելով պատահական ընտրանքի բացակայությամբ առաջացող շեղումները: 389 շրջանավարտներից 237-ը կամ 60.9 տոկոսը բակալավրական կրթական տարբեր ծրագրերի, իսկ 152-ը կամ 39.07 տոկոսը մագիստրոսական տարբեր ծրագրերի որակավորումներ ունեն:

Շրջանավարտների հարցմանը զուգահեռ նաև առանձին հարցաշարով բակալավրական և մագիստրոսական կրթական ծրագրերի ավարտական կուրսի ուսանողները պատասխանել են մի շարք հարցերի, որոնք միտված էին բացահայտելու զբաղվածների հարաբերակցությունը, նրանց բնութագրիչները, հաղթահարած դժվարությունները և այլն: Հարցմանը մասնակցել են 431 ուսանողներ, որոնք հարցաշարը լրացրել են առցանց տարբերակով և արդյունքում, որպես կանոն, ավելի շատ արձագանքել են գերազանց և լավ առաջադիմություն ունեցողները: Հետևաբար, գոյացած պատկերը որոշակի դրական շեղում ունի իրականությունից: Որպեսզի այդ շեղումը չազդի վերլուծության վրա, հարցման արդյունքները ներկայացվել են ստրատիֆիկացված՝ առանձնացնելով գերազանց, լավ և բավարար առաջադիմությամբ ուսանողների գրանցած արդյունքները և պատասխանները: Գերազանց առաջադիմությամբ հարցման մասնակիցների թիվը կազմել է ամբողջի 29.8 տոկոսը, մինչդեռ բավարարինը՝ 7 տոկոս է եղել: Սա կարող է չափից ավելի լավատեսական պատկեր գեներացնել և առաջացնել ներկայացուցչական ընտրանքի դեպքում իրականությանը բավականին մոտ կանգնած արդյունքներից շոշափելի շեղումներ՝ նսեմացնելով դրանց հիման վրա արված հետևությունների դերն ու օգտակարությունը: Հետևաբար, ինչպես և նշվել էր, բոլոր վերլուծությունները տարաբաժանված են ներկայացվել:

Դուբլինյան դեսկրիպտորների հենքի վրա կառուցված շրջանավարտների գնահատումը

Դուբլինյան դեսկրիպտորների միջոցով նկարագրվող ձեռնահասությունների երկաստիճան համակարգի փաստացի գնահատման համար շրջանավարտների հարցաթերթիկում ներառվեցին երկու հարց, որոնցից մեկը միտված էր

բացահայտելու բուհի ներքին արդյունքը, իսկ մյուսը՝ արտաքինը: Առաջին հարցով⁴ (որը այստեղ կողավորվել է Ա տառի ու թվերի համադրությամբ) շրջանավարտներին առաջարկվում էր դիտարկել սեփական մասնագիտությամբ ուսումնառությունը ԵրՊԼՀ-ում, 1-ից 5 բալային սանդղակի շրջանակներում գնահատելով պատրաստվածության մակարդակը: Այս հարցի և պատասխան տարբերակների միջոցով փորձ էր կատարվում գնահատել ուսումնառության, մասնավորապես դասավանդման և դրա արդյունքում որոշակի ձեռնահասությունների ձևավորման արդյունավետության ընկալումը շրջանավարտների շրջանում, երբ վերջիններս արդեն ավարտել էին իրենց ուսումնառությունը և հետահայաց կարող էին որոշակի դատողություններ անել: Մյուս հարցը⁵, որը տրվել էր շրջանավարտներին (և այն այստեղ կողավորված է Բ տառի և թվերի համադրության օգտագործմամբ) նպատակ

⁴ Շրջանավարտներին հարց էր տրվել առ /Ա/ ԵրՊԼՀ-ում ձեռք ընտրած մասնագիտությամբ /մասնագիտացմամբ/ ուսումնառությունը ինչքանո՞ւ պատշաճ պատրաստվածություն է տվել ձեզ: Պատասխան տարբերակները հետևյալն են՝ Ա-11 ուսումնասիրված տեսությունները բացատրող մեթոդներն ու մոտեցումները մեկնաբանելու կարողություն, Ա-21 որևէ թեմայից քննարկվող գործընթացի կամ նյութի վերաբերյալ մեկնաբանություններ անելու, քննադատաբար վերլուծելու կարողություն, Ա-22 որևէ թեմայից քննարկվող գործընթացի կամ նյութի վերաբերյալ դատողություններ անելու, տրամաբանական շղթա կառուցելու ու հետևություններ անելու կարողություն, Ա-23 համալսարանում ուսումնառության ու պրակտիկայի ընթացքում անձնապես ու սոցիալապես հասունացում, Ա-31 քննադատական մտածողության ու քննարկումների արդյունքում որևէ թեմայի շուրջ գրավոր աշխատանքների իրականացում, Ա-32 այլ մշակույթները արժևորելու, դրանցում տեղ գտած այս կամ այն մոտեցումները վերլուծելու, բացատրելու, մեկնաբանելու կարողություն, Ա-33 դասընթացի շրջանակում հետազոտական աշխատանքի միջոցով փորձարարական հետազոտության նախագծի կազմում, տվյալների հավաքագրում և վերլուծություն, արդյունքների մեկնաբանում, Ա-34 պրակտիկայի շրջանակում հետազոտական աշխատանքի միջոցով փորձարարական հետազոտության նախագծի կազմում, տվյալների հավաքագրում և վերլուծություն, արդյունքների մեկնաբանում, Ա-42 դասընթացներից դուրս համալսարանական կյանքի /միջոցառումներ, ուսանողական կյանք, պրակտիկա/ միջոցով ինտելեկտուալ շրջանակի ու աշխարհընկալման ամբողջականացում, Ա-43 ուսումնառության ընթացքում տարբեր միջոցներով քաղաքացիության ու առաջնորդության հասկացությունների ընդհանրական ընկալում, Ա-44 օտար լեզուների ուսուցման միջոցով այլ մշակույթների ու այդ բազմազանության գիտակցում, Ա-52 ինքնուրույն աշխատանքի ու ժամանակի կառավարման հմտությունների ձևավորում:


⁵ Շրջանավարտներին հարց էր տրվել առ /Բ/ Արդյո՞ք ԵրՊԼՀ-ում ստացած մասնագիտությունը /մասնագիտացումը/ ձեզ պատշաճ նախապատրաստել է հետևյալ բոլոր ենթակետերով: Պատասխան տարբերակները հետևյալն են՝ Բ-11 մասնագիտությանը /մասնագիտացմանը/ վերաբերող առարկայական գիտելիք և ուսումնասիրության առարկայի իմացություն, Բ-12 մասնագիտությանը /մասնագիտացմանը/ վերաբերող տեսությունների իմացություն, Բ-13 մասնագիտությանը /մասնագիտացմանը/ վերաբերող՝ ուսումնասիրության առարկայի մասին հիմնական տեսական հենքը ապահոված անցյալի ու ներկայի գիտնականների իմացություն, Բ-21 առկա կիրառական կամ տեսական խնդրի սահմանման ու լուծման համար ուսումնառության ընթացքում ձեռքբերված գիտելիքի համակարգված կիրառման կարողություն, Բ-22 քննադատաբար մտածելու կարողություն, Բ-31 մասնագիտությանը /մասնագիտացմանը/ վերաբերող տեղեկատվության որոնման գործընթացի ու դրա գիտելիքի վերածման կարողություն, Բ-32 տեղեկատվություն որոնելու, այն մեկնաբանելու և կիրառելու կարողություն, Բ-41 համոզում առ այն, որ հաճախ, եթե ոչ միշտ տարբեր տեսանկյուններն առանձնացնելու ու դրանք ըմբռնելու անհրաժեշտություն կա, Բ-51 համոզում առ այն, որ ուսումնառությունը շարունակական գործընթաց է և տարբեր ձևերով շարունակվում է ամբողջ կյանքի ընթացքում:

ուներ բացահայտելու արտաքին արդյունքը՝ ուսումնառության որպես արդյունքի աշխատանքի շուկայի համեմատությամբ համապատասխանության աստիճանի մասին ունեցած ընկալումները:


Բակլավի	Ունեն համապատասխան գիտելիքներն ու ընկալումը իրենց մասնագիտության ոլորտում	Կարող են կիրառել այդ գիտելիքներն ու ընկալումն այնպես, որ այն կփաստի սեփական գործի նկատմամբ մասնագիտական մոտեցման մասին, ունեն համապատասխան ձեռնահասություններ իրենց մասնագիտական ոլորտում առաջացած խնդիրները լուծելու համար	Կարող են հավաքել և մեկնաբանել վիճակագրական տվյալներ, որոնք կօգտագործեն համարժեք դատողություններ ձևակերպելու համար՝ ներառելով համապատասխան սոցիալական, գիտական և էթիկական հարցերը	Կարող են փոխանցել տեղեկատվությունը, գաղափարները, առկա խնդիրները և դրանց լուծումները թե մասնագետներին , թե այլ մարդկանց	Ձևավորել են ինքնակրթվելու հմտություններ
Մագիստրոս	Որպես կանոն ունեն առաջին մակարդակի վրա հենված ընդլայնված համապատասխան գիտելիքներն ու ընկալումը իրենց մասնագիտության ոլորտում, որը հնարավորություն է ընձեռում դրանց հիման վրա ձևավորել և/կամ կիրառել նոր գաղափարներ, հաճախ դրանք իրականացնելով հետազոտական համատեքստում	Կարող են կիրառել այդ գիտելիքներն ու ընկալումը, ինչպես նաև խնդիրներ լուծելու կարողությունները նոր, հաճախ անծանոթ ու միջառարկայական համատեքստում՝ իրենց մասնագիտական ոլորտում առաջացած խնդիրները լուծելու համար	Կարող են համարկել գիտելիքները և գործ ունենալ տարբեր բարդության աստիճանների հետ, ձևակերպել դատողություններ հիմնվելով սահմանափակ կամ ոչ ամբողջական տեղեկատվության վրա, որոնք նաև շոշափում են սոցիալական ու էթիկական պատասխանատվությունը կապված այդ դատողությունների ու գիտելիքի կիրառության հետ	Կարող են հստակ փոխանցել իրենց գիտելիքները և թեզերի հիմնավորումները թե մասնագիտական , թե ոչ մասնագիտական շրջանակներին	Կարող են ինքնուրույն շարունակել ուսումնառության գործընթացը հիմնականում ինքնավար աշխատանքային ռեժիմում
Ա-12	Ա-21	Ա-31	Ա-41	Ա-51	
Ա-11	Ա-22	Ա-32	Ա-42	Ա-52	
Բ-11	Բ-21	Ա-33	Ա-43	Բ-51	
Բ-12	Բ-22	Ա-34	Ա-44		
Բ-13		Բ-31	Բ-41		
		Բ-32			

Այն ի տարբերություն առաջին հարցի, որը ավելի շատ գնահատում է ԵրՊԼՀ-ում ընթացող գործընթացները, մասնավորապես ուսումնառությունը, փորձում է վերլուծել արդյունքը՝ մասնագիտությունն ու դրա համապատասխանությունը: Որակավորումների շրջանակը նկարագրող դեսկրիպտորների միջակայքը ներառում է տվյալ մասնագիտության ոլորտում գիտելիքների, դրանց կիրառության, համապատասխան վիճակագրական տվյալների գործածությամբ մեկնաբանությունների, տեղեկատվության փոխանցման և ինքնակրթվելու ձեռնահասությունները: Այդ ձեռնահասությունները համապատասխան ներքին և արտաքին կամ գործընթացային ու արդյունքային հարցերում տեղ գտած

տարբերակների խմբավորմամբ թույլ են տալիս գնահատել ԵրՊԼՀ-ում որակավորումների շրջանակի տեսանկյունից ուսումնառության և մասնագիտական համապատասխանության աստիճանն ու ընկալումները: Շրջանավարտների տրված հարցերում տարբերակների սանդղակն ուներ հնգաստիճան՝ անբավարար (1), քիչ բավարար (2), միջին բավարար (3), բավարար (4), գերազանց (5) գնահատման հնարավորություն, որտեղ ըստ փաստացի արդյունքների, ընդհանուր առմամբ պատասխանները նորմալ են բաշխված, սակայն առկա է որոշակի դրական շեղում: Արդյունքները դիտարկելիս այդ շեղումը պետք է հաշվի առնել:



Շրջանավարտների գնահատման մեջ, բացի նորմալ բաշխվածության որոշակի բացառիկ շեղումներից նաև առկա է դրական տեղաշարժվածություն, ինչը, հավանաբար, պայմանավորված է այն փաստով, որ գնահատման սանդղակում “բավարար” (4) գնահատականը իրականում հայերեն լեզվամտածողությամբ մարդու մտապատկերման մեջ ունի (3) արժեքը:



Նմանատիպ շեղվածություն և որոշակի խախտվածություն է նկատվում նաև Բ հարցի պատասխան տարբերակներում, որտեղ օրինակ՝ Բ-51-ի կամ Բ-12-ի դեպքում տարբերակն իր կառուցվածքով նման շեղում է առաջացրել: Դա ենթադրում է, որ այս հարցերը հետազայում պետք է վերանայվեն, որպեսզի հնարավոր լինի առավել ճիշտ գնահատել ընկալումները:

Գործատուներ. որակական հետազոտության մեթոդաբանություն

Շրջանավարտների և ուսանողների հետազոտությանը զուգահեռ որոշակի տրամաբանությամբ ընտրված 24 գործատուի հետ իրականացվել է հարցազրույց, որի նպատակն էր նաև պարզել աշխատանքի շուկայում առկա պահանջարկի կառուցվածքը կամ դրա բացակայության պատճառները: Հարցազրույցում ներառված գործատուների մեծ մասը կրթության ոլորտից էր, որը նաև պայմանավորված էր ԵրՊԼՀ շրջանավարտների այլ ոլորտում շոշափելի ներկայությամբ: Հարցված գործատուների մոտավորապես կեսը մասնավոր հատվածի ներկայացուցիչներ են, դրանց թվում նաև ներառվել է երկու մասնավոր համալսարան, որտեղ այլոց թվում աշխատում են ԵրՊԼՀ շրջանավարտներ: Հարցվածների ցանկում ներառվել են միջազգային կազմակերպություններ և միջազգային հասարակական կազմակերպություններ, ինչպիսիք են օրինակ Համաշխարհային բանկը և IREX-ը: Մասնավոր հատվածի գործատուների թվում ներառվել են բանկեր, ինչպես օրինակ ՎՏԲ և Էյջ-Էս-Բի-Սի բանկերը, SYNOPSYS և Orange ընկերությունները: Գործատուների հետ իրականացվել են խորքային հարցազրույցներ, որոնց առանցքը կազմել են 10 հիմնական հարցեր: Այդ հարցերի շուրջ էլ վարվել է հարցազրույցը, պատասխանները տեղում գրառվել են: Ընթացքում առաջացած հարցերն ու պատասխանները այնուհետև համակարգվել են և դրանց արդյունքները համադրվել: Շրջանավարտների հարցման շրջանակում ներառվել էր հարց, որի միջոցով վերջիններս գնահատել էին տարբեր հմտությունների⁶ բուհում բավարար ձևավորման մակարդակը 1-ից 5 սանդղակի միջոցով, ապա այն համադրվել էր

⁶ **2-1 (Ընդհանրական)** քննադատաբար մտածել, **2-2 (Սոցիալ-զգացական)** աշխատել տարբեր թիմերում, **2-3 (Մասնակցային)** որպես քաղաքացի ծառայել ձեր համայնքին, **2-4 (Մասնակցային)** առաջնորդել տարբեր մարդկանց, **2-5 (Ընդհանրական)** համակարգչային գրագիտություն ունենալ, **2-6 (Ընդհանրական)** ցուցադրել բանավոր խոսքի հմտություններ, **2-7 (Ընդհանրական)** ցուցադրել գրավոր խոսքի հմտություններ, **2-8 (Մեթոդաբանական)** օգտագործել վիճակագրական տվյալներ, **2-9 (Մեթոդաբանական)** կատարել տարրական մաթեմատիկական հաշվարկներ, **2-10 (Մեթոդաբանական)** հասկանալ ու գործածել պատմական փաստերն ու նյութերը, **2-11 (Սոցիալ-զգացական)** ձևավորել անհատական արժեհամակարգ, **2-12 (Մեթոդաբանական)** կիրառել գիտական տեղեկատվությունը և կատարել դատողություններ, **2-13 (Սոցիալ-զգացական)** հասկանալ մարդկային վարքագիծը, **2-14 (Սոցիալ-զգացական)** ընկալել մշակույթի ազդեցությունը, **2-15 (Մեթոդաբանական)** խնդրի լուծման նպատակով համադրել տարբեր գիտելիքները, **2-16 (Մասնագիտացված)** կիրառել մասնագիտության շրջանակում յուրացրած հասկացությունները:

գործատուների հարցազրույցի արդյունքների հետ: Այս դեպքում ի տարբերություն շրջանավարտների, ովքեր բավարար ձևավորման մակարդակն էին գնահատում, գործատուները գնահատում էին իրենց համար կարևորության մակարդակը նորից 1-ից 5 սանդղակի միջոցով: Այսպիսի համադրությունը թույլ կտար ասել, թե ո՞ր հմտություններն են պահանջարկված շուկայում, որքանո՞վ է շուկան և գործատուն գիտակցում դրանց կարևորությունը և ինչպիսի՞ համարժեք պատրաստվածության մակարդակ է ապահովում բուհը: Վերջինս էլ թույլ կտար հետագայում ըստ արձանագրած արդյունքների ու առկա կարիքների վերանայել կրթական ծրագրերը և իրականացնել անհրաժեշտ փոփոխություններ: Բացի այդ, այս հմտությունները խմբավորվել են ըստ Garcia-Aracil & Van der Velden –ի 2008թ.-ին իրականացված հետազոտության մեթոդաբանության, որտեղ օրինակ ընդհանրական հմտությունների շարքում են դասվել բանավոր ու գրավոր հաղորդակցության հմտությունները և այլն: Սա նաև թույլ կտար, ընդհանուր առմամբ ասել, թե հմտության, որ տեսակներն են շուկայում պահանջարկված, իսկ որո՞նք դեռևս առկա չեն և ինչու՞: Բացի այդ, սրանք ավելի տեսանելի կդարձնեն այն ուղղությունները, որոնցով բուհը պիտի աշխատի, որպեսզի շրջանավարտների հմտությունները ավելի մշակված լինեն բուհն ավարտելիս:


Հետազոտության սահմանափակումները

Ժամանակային սահմանափակումները ստիպեցին ուսանողների հետազոտությունը ավարտել ընթացիկ կիսամյակի ընթացքում: Բացի այդ, գործատուների հետ ազատ հարցազրույցի ձևաչափը առաջացրեց այնպիսի արդյունքներ, որոնք մասամբ չբացահայտեցին շուկայի պահանջարկի կառուցվածքը: Բացի այդ, շրջանավարտների հետ աշխատանքը բավականին դժվարանում էր, քանի որ նրանց մեծ մասը շրջաններից է, ինչը թույլ չէր տալիս հասցեավորված աշխատանք տանել, ինչպես նաև դժվարացնում էր տվյալների հավաքագրումը: Գործածվող SurveyMonkey տեխնոլոգիական փաթեթը ուներ որոշակի սահմանափակումներ: Դրանցից մեկը այն էր, որ անհնար էր դառնում առանձնացնել հարցերին պատասխանածներին: Կար պոտենցիալ վտանգ, որ հարցմանը կարող էին պատասխանել մի քանի անգամ: Բայցևայնպես, հաշվի առնելով հարցաշարի ծավալը, ավելի մեծ էր այն ռիսկը, որ հարցաշարին չեն պատասխանի: Վերջապես, շրջանավարտների ընտրանքի մեծությունը թույլ չէր տալիս ընդհանրական դատողություններ անել առանձին մասնագիտությունների կամ կրթական մակարդակների հաշվառմամբ, այլ այդ ընդհանրացումները հնարավոր էին միայն բուհի մակարդակում: Համենայն դեպս, հարցման կառուցվածքն այնպիսին էր, որ կարելի էր որոշակի ոչ ներկայացուցչական տվյալներ առանձնացնել առանձին ծրագրերի ու մասնագիտությունների համար՝ նշելով այս սահմանափակումը:

ԳԼՈՒԽ 3. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Բուհի ավանդական շուկան


ԵրՊԼՀ-ն շարունակում է շուկայում գրադեցնել իր ավանդական տեղը, որը կրթության ոլորտն է: ԵրՊԼՀ շրջանավարտների 37.3 տոկոսը աշխատում է կրթության ոլորտում: Հաշվի առնելով այն փաստը, որ մինչև 2015 թվականը դպրոցահասակ տարիքի երեխաների թվաքանակը նվազելու միտում ունի, ապա այսպիսի ներկայությունը և հենքը կրթական համակարգում լրջորեն վտանգում է շրջանավարտների գրադավածության, ինչպես նաև գրադավունակության հեռանկարները: Դրան զուգահեռ ԵրՊԼՀ աշխատանքի հիմնական շուկան ներառում է սոցիալական ծառայությունների մատուցման, հյուրանոցների ու ռեստորանների, ֆինանսական գործունեության, պետական կառավարման, կապի ու տրանսպորտի ոլորտները:



Հրատապ են մասնագիտությունների և, մասնավորապես մասնագիտացումների վերանայումները: Տարեկան մշտադիտարկումներում հարկավոր է համեմատության մեջ դիտարկել այս ցուցանիշների միտումները, սակայն արդեն իսկ կարելի է ասել, որ սոցիալական ծառայությունների մատուցումը, ռեստորանային ու հյուրանոցային

բիզնեսը, ինչպես նաև պետական կառավարումը այն այլընտրանքներն են, որոնց կրթական ծրագրերին հատուկ ուշադրություն պետք է դարձնել: Այսպիսի բազմազանեցումը նաև ռազմավարության տեսանկյունից շատ ավելի անվտանգ է, քանի որ համալսարանն իր գործունեությունը չի կենտրոնացրել միայն մեկ կամ երկու ոլորտների շրջանակներում: Դրանք կարող են դառնալ ապագայում շուկայում բուհի ներկայության հենքն ու գրավականը: Ֆինանսական հատվածում շրջանավարտների ներկայությունը կազմում է 5.6 տոկոս, որը հաշվի առնելով ֆինանսական գործունեության և հաստատությունների միջազգայնացվածության մակարդակն ու լեզվի իմացության անհրաժեշտությունը կարող էր ավելի մեծ լինել:

Եթե աշխատում եք, ապա ձեր գրադոցրած պաշտոնը ներքոնշյալ խմբերից ո՞ր մեկի միջոցով առավելագույնս ճշգրիտ կնկարագրվի:



Հարցումների միջոցով փորձ է արվել գնահատել շուկայում աշխատանքի գործառույթների բարդությամբ պայմանավորված ներթափանցման մակարդակը: Գոյություն ունեցող 8 մակարդակներից⁷, որոնք ըստ բարդության սահմանվել են

⁷ Մահմանված մակարդակներն են ա/ օրենսդիր, բարձր պաշտոնյա, կառավարիչ, ղեկավար, բ/ մասնագետ, փորձագետ, գ/ տեխնիկ, մասնագետի/փորձագետի օգնական, ե/ ադմինիստրատիվ աշխատող, քարտուղար, կլերկ, զ/ ծառայություններ մատուցող, վաճառող, սպասարկող անձնակազմ, է/ արհեստավոր, ը/ մեքենավար, հաստոցագործ, արտադրամասի աշխատող, թ/ բանվոր տարբերակները:


Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից, ԵրՊԼՀ շրջանավարտները շուկայում զբաղեցնում են վերին-միջին շերտը: Զբաղված շրջանավարտների 38.3 տոկոսը ներգրավված է մասնագիտական կամ փորձագիտական աշխատանքներում, որը, ըստ այս դասակարգման հնարավոր 8-ից 6-րդ մակարդակն է: Այս մակարդակին հաջորդում է ադմինիստրատիվ աշխատողի 5-րդ մակարդակը, որտեղ զբաղված շրջանավարտները կազմում են 37.5 տոկոս: Լավագույն շրջանավարտների 47.1 և ուժեղների 55.6 տոկոսը աշխատում է որպես մասնագետ կամ փորձագետ, իսկ 29.4 և 27.8 տոկոսները համապատասխանաբար աշխատում են ադմինիստրատիվ պաշտոններում: Իհարկե, Հայաստանյան շուկան շարունակում է սեղմված մնալ, սակայն ուսանողի ձեռնահասությունների ու հմտությունների որոշակի մակարդակը երաշխավորում է խորքային ներթափանցում: Սա փաստում է *շուկայում զբաղվածության ներթափանցման մակարդակի տեսանկյունից ԵրՊԼՀ-ում ուսումնառության որակի դրական ազդեցության մասին:*

Առաջարկություն 1. ԵրՊԼՀ-ն դեռևս շարունակում է ավանդական շուկայում վերահաստատել սեփական դերակատարությունը: Ավելին, շրջանավարտների մեկ երրորդը զբաղեցնում է ադմինիստրատիվ պաշտոններ: Այս ցուցանիշները կարելի է փոխել, դրանք ենթարկելով ռազմավարական ծրագրավորման: Իհարկե, Հայաստանյան շուկան շարունակում է սեղմված մնալ, սակայն ուսանողի ձեռնահասությունների ու հմտությունների որոշակի մակարդակը երաշխավորում է խորքային ներթափանցում: Այս առթիվ, ԵրՊԼՀ-ն պետք է սեփական կրթական ծրագրերը վերանայի հաշվի առնելով այն ձեռնահասություններն ու հմտությունները, որոնք առավել պահանջարկված են, թե կարճաժամկետ, թե երկարաժամկետ կտրվածքով: Հրատապ է շրջանավարտների տարեկան հարցումների հիման վրա բուհի մարքեթինգային ռազմավարության մշակումը, որտեղ բաղադրիչներից մեկը կքննարկի բուհի կողմից տրամադրվող որակավորումների բազմազանեցման, մյուս կողմից՝ շուկայում զբաղվածության 6-րդ մակարդակի ներթափանցման աստիճանի մեծացման մարտավարությունը: Առաջիկայում, բուհի որակի ապահովման կենտրոնը կարիերայի կենտրոնի հետ միասին պետք է մշակի հերթական հետազոտության կառուցվածքն ու ժամանակացույցը: Հաջորդիվ, պետք է մշակվի կարիերայի կենտրոնի հետազոտական հզորությունների շարունակական զարգացման միջոցառումների ծրագիր ու ժամանակացույց, որը թույլ կտա վերջինիս ապահովել բուհ-շուկա-շահեկիցներ հետադարձ կապն ու կանխատեսել ապագայի միտումները: Վերջապես, կարիերայի կենտրոնը աստիճանաբար պիտի ապահովի նաև շարունակական՝ երկարաժամկետ հետազոտությունների իրականացումը, որի համար որակի ապահովման կենտրոնը պիտի ապահովի մեթոդաբանական հենքը: Բուհը մշտապես պիտի ճշգրտի իր դիրքը աշխատանքի շուկայում և ապագա հնարավոր միտումները, ինչպես նաև մշակի այդ դիրքի բարելավմանն ուղղված միջամտող գործողություններ, ինչպես օրինակ՝ մարքեթինգային ծրագիրը:

Պրակտիկան դեռևս չի ծառայում իր նպատակին

Բուհը իր ոչ գործնական պրակտիկաներով և հիմնականում տեսական գիտելիքներով դեռևս շոշափելի ազդեցություն չունի ուսանողների զբաղվածության մեծացման վրա: Հարցված շրջանավարտների 44.9 տոկոսը աշխատանք է գտել այլ միջոցներով: Դրան հաջորդում են ծնողների ու բարեկամների կապերը, որին դիմել են հարցվածների 19.9 տոկոսը: Ապա՝ հաջորդում են համացանցը, համալսարանի դասախոսներն ու կարիերայի կենտրոնը, որոնց միջոցով աշխատանք են գտել հարցվածների 27.5 տոկոսը: Ուսանողների հարցումների արդյունքում պարզ է դառնում, որ այլ միջոցները անհատական նախաձեռնություններն են:

Եթե աշխատում եք, ապա ինչպե՞ս եք գտել Ձեր աշխատանքը:



Աշխատանք ունեցող ուսանողների մեծ մասը աշխատանքի որոնման գործում սեփական նախաձեռնողական գործողությունների միջոցով է կարողացել աշխատանք գտնել: Մյուս գործոնը այս դեպքում ևս ծանոթներն ու ընկերներն են եղել, ովքեր սեփական խորհուրդներով և առաջարկություններով օգնել են հարցվածներին գտնել աշխատանք: Զբաղվածության գործակալություններն ու ուսումնառության տարիներին կազմակերպված պրակտիկաները շոշափելի ազդեցություն չեն ունենում: Եթե զբաղվածության գործակալության դեպքում տվյալ գործոնի վրա ներգործելու անհրաժեշտություն չկա, ապա ուսումնական և/կամ արտադրական պրակտիկայի պարագայում բուհը կարող է արդիականացնել այն և

համապատասխանեցնել յուրաքանչյուր որակավորման պահանջներին՝ դրանք համարկելով կրթական ծրագրին: Սա ենթադրում է, որ բուհի ղեկավար անձնակազմը և, մասնավորապես ֆակուլտետների ղեկավարները կարիերայի կենտրոնի հետ համատեղ պետք է համակարգեն արտադրական պրակտիկայի գործընթացը, դրա պլանավորման ու իրականացման տրամաբանությունը համարկելով կրթական ծրագրի վերջնարդյունքների հետ և դրանց սահմանման գործընթացում ներգրավելով գործատուներին՝ պարբերական հանդիպումների միջոցով:


Առաջարկություն 2. Արտադրական պրակտիկայի արդիականացման ու դրա համապատասխանության բարձրացման նպատակով, բուհը պետք է աշխատանքներ իրականացնի երեք հիմնական ուղղություններով: Առաջին, արտադրական պրակտիկան պետք է սահմանվի կրթական վերջնարդյունքների միջոցով և չենթարկվի ժամանակային սահմանափակումների: Երկրորդ, արտադրական պրակտիկայի կազմակերպման գործընթացը պետք է ստանա համակարգված բնույթ, որոշակի հստակ սահմանված ու թափանցիկ չափանիշներով: Երրորդ, բուհը պիտի իրեն դիտարկի որպես գործատու և համադրի սեփական կարիքները ուսանողի արտադրական պրակտիկայի կրթական վերջնարդյունքների հետ: Հետևաբար, օգտագործելով ԵՀ-ի ԿՓԵՀ օգտագործողի ուղեցույցում ներկայացված պրակտիկայի եռակողմ պայմանագրի օրինակելի ձևը, բուհը պետք է մշակի արտադրական պրակտիկայի եռակողմ պայմանագրի սեփական ձևաթուղթը, որը հստակ պարտավորություններ կսահմանի այս գործընթացքում ներգրավված բոլորի կողմերի համար: Այն նաև պարզ կդարձնի ուսանողի կողմից պրակտիկայի ընթացքում հաղթահարելիք շեմերը՝ կրթական վերջնարդյունքները: Այս մոտեցումը թույլ կտա ազատականացնել արտադրական պրակտիկայի կազմակերպման ժամկետների կարծրացած ժամկետները, որը կմեծացնի նաև առաջարկի հնարավորությունները: Նման մոտեցման դեպքում ուսանողների պրակտիկան կհամապատասխանեցվի գործատուի կարիքների հետ: Բուհն ունի բավարար հնարավորություններ, շոշափելի կարիքներ, պրոֆիլային համապատասխանություն, որպեսզի հաջողությամբ կարողանա արտադրական պրակտիկա կազմակերպել սեփական ստորաբաժանումներում, այս դեպքում նորից առաջնորդվելով արտաքին գործատուների նկատմամբ կիրառվելիք մոտեցումներով: Բուհի որպես գործատու հանդես գալու դեպքում, եռակողմ պայմանագրի կողմերից մեկը կլինի տվյալ կառուցվածքային ստորաբաժանումը, որի կարիքներից էլնելով հայտարարվել է մրցույթ: Վերջապես, այս գործընթացը պետք է առաջնորդվի հստակ սահմանված չափանիշներով, որոնք կկառավարվեն ու կկանոնակազմվեն հստակ սահմանված կարգերի միջոցով:

Կրթությունը ազդում է զբաղվածության վրա

Հետազոտության արդյունքում հաստատվեց զբաղվածության փոխկապակցվածությունը կրթության հետ: Շրջանավարտների 86.5 տոկոսը ԵրՊԼՀ-

ում ստացած կրթությունը համարում է, որ որոշ չափով, կամ էլ ամբողջությամբ բավարար պատրաստվածություն է տվել աշխատանքային գործունեությունը հաջողությամբ սկսելու համար:

Խնդրում ենք նշեք այն տարբերակը, որը լավագույնս նկարագրում է ձեր զբաղվածության տեսակը՝



Այն շրջանավարտները, որոնք արդեն աշխատում էին, իսկ դրանք ըստ հարցին պատասխանածների թվի մոտավորապես կազմում են 50.6 տոկոս, այլ աշխատակիցների հետ համեմատության մեջ, ընդհանուր առմամբ բավարար են գնահատել իրենց կարողությունները: Ջբաղված շրջանավարտների 78.8 տոկոսը սեփական ուժերը գնահատելիս բավականին վստահ է իրեն զգում սեփական աշխատանքային պարտականությունները կատարելիս և գործընկերների հետ համեմատության մեջ: Աշխատող շրջանավարտների 40 տոկոսը աշխատանք է գտնում դեռևս ուսանելիս, 69.7 տոկոսը ավարտելուց հետո մեկից երեք ամսվա ընթացքում, իսկ առավելագույն ժամկետը մեկ տարին է: Սա գործազրկության տևողության տեսանկյունից լավ ցուցանիշ է: Եթե հաշվի առնենք, որ կրթական գործընթացում չընդգրկված և աշխատանք չունեցող շրջանավարտների ցուցանիշը 15 տոկոս է կազմում, այն համադրելով գործազրկության կարճաժամկետ տևողության հետ, կարելի է եզրակացնել, որ ընդհանուր շուկայում ԵրՊԼՀ շրջանավարտները դեռևս առավել շահեկան դիրք են զբաղում և նվազ ռիսկային գոտում են գտնվում, թե

գործազրկության, թե դրա տևողության տեսանկյունից: Սակայն, կրթությունից աշխատանքի անցնելիս և ավելի բարձրակարգ՝ բարձր բավարարվածությամբ և վարձատրությամբ աշխատանք գտնելիս պատկերը այդքան էլ գոհացուցիչ չէ:

Շրջանավարտները հաճախ հստակ չեն պատկերացնում, թե ավարտելիս տվյալ որակավորմամբ զբաղվածության ինչպիսի հնարավոր հետագծեր կան գործող շուկայում: Հարցումների արդյունքները ցույց են տալիս, որ շրջանավարտները լուրջ խնդիրներ են ունեցել որակավորմանը համապատասխանող աշխատանք, պատկերացմանն ու ցանկություններին համարժեք, բավարար վարձատրվող աշխատանք գտնելիս: Սա նշանակում է, որ վերջնարդյունքը կիրառական առումով հաճախ հստակ չէ: Հրատապ է դառնում ըստ կրթական որակավորումների արդեն Հայաստանյան շուկայում տարբեր կազմակերպություններում աշխատող ուսանողների մասին ընդհանրական տեղեկատվության տրամադրումը և կարիերայի կենտրոնի միջոցով կազմակերպվող կողմնորոշիչ միջոցառումների կազմակերպումը: Դիմորդները ընդունվելիս պետք է իմանան, թե այս կամ այն կրթական ծրագրի ավարտին ինչպիսի աշխատանքների ակնկալիք կարող են ունենալ, սա ԿՓԵՀ (ECTS) տեղեկատվական փաթեթում պահանջվող պարտադիր տեղեկատվություններից մեկն է, որը ցանկացած բուհ պետք է ի սկզբանե տրամադրի, որպեսզի հետագայում շրջանավարտները այսպիսի խնդիրներ չունենան:


Առաջարկություն 3. Հետևաբար, բուհերը պետք է իրենց առաջիկա ռազմավարական ծրագրում միջազգայնացման խնդրից ելնելով, ներառեն միջոցառումների համախումբ միտված ԿՓԵՀ տեղեկատվական փաթեթի ներդրմանն ու հեռանկարում նաև ԿՓԵՀ պիտակի ձեռքբերմանը: Բացի այդ, աշխատանքի որոնման բարդությունները հաղթահարելու նպատակով բուհը կարող է աստիճանաբար բարձրացնել զբաղվածության հնարավորությունների տարածման արդյունավետությունը, շրջանավարտների ասոցիացիայի միջոցով: Վերջինիս կառուցվածքում Կարիերայի կենտրոնի միջոցով և աջակցությամբ կարելի է ստեղծել նախկին շրջանավարտներից կազմված “մենթորների” ցանց, որը լրացուցիչ հարաբերությունների ու կապերի միջոցով, թե տեղեկատվության, թե կապերի, թե կրթական լրացուցիչ ծրագրերի միջոցով ԵրՊԼՀ ավարտական կուրսի ուսանողների համար աշխատանքի շուկայում կձևավորի համեմատական առավելություններ:

Որակի՝ որպես բրենդի զարգացումը հրատապ է

Կրթության որակը լուրջ բրենդ է, որի ձևավորումն ու պահպանումը պետք է մտահոգի բուհի ղեկավարությանն ու անձնակազմին: Հարցման արդյունքները ցույց էին տվել, որ շրջանավարտների 40.5 տոկոսը ընտրել էր ԵրՊԼՀ-ն, քանի որ այն որակյալ բուհի համբավ ուներ: 2010 թվականին ավարտածների 52.4 տոկոսը ի տարբերություն իր բուհի մասին ունեցած նախնական համբավի առ այն, որ

կրթության որակը բարձր է, հիմա այն գնահատել է որոշ չափով բավարար: Սա ընկալման մեջ բացասական շեղում է առաջացրել, որը մտահոգիչ է և պետք է լրացուցիչ դիտարկվի: 37.5 տոկոսը շարունակում է մնալ այն կարծիքին, որ բուհի կրթական ծրագրերի որակը բավարար է, իսկ 8.3 տոկոսը այն գնահատել է ոչ բավարար:

Եթե շարունակում եք ձեր կրթությունը, ապա ի՞նչ եք կարծում ԵՐՊԼՀ-ում ստացած կրթությունը ձեզ բավարար պատրաստված է դարձրել կրթության այս մակարդակում ուսումը շարունակելու համար:



Փաստորեն 60.7 տոկոսը բուհի մասին ունեցած նախնական դրական կարծիքը որոշ չափով կամ ամբողջովին վերանայել է: Հատկանշական է, որ կրթությունը շարունակողների շարքում կրթության որակը բավարար գնահատողների պատկերը հակառակ համեմատական է նախորդ պատկերի հետ, այստեղ 53.8 տոկոսը շարունակում է վստահել բուհի բարձր որակին: Պատահական չէ, որ բարձր որակի ընկալումը նաև կրթությունը շարունակելու և այդ կրթական ծառայություններից օգտվելու ցանկություն է առաջացրել, որն ուսանողներից շատերին կրթական երկրորդ մակարդակում ներգրավված լինելու նախապայմաններից մեկն է հանդիսացել: Նմանատիպ պատկեր է նաև տվյալ մասնագիտությամբ հետաքրքրվածների շարքում, որոնց 53.5 տոկոսը ևս կարծում է, որ բուհի պատրաստման որակը բավարար է եղել: Առաջին ընտրությամբ կրթության որակն առանձնացրած շրջանավարտների 38.7 տոկոսը նաև կարևորել է պետական բուհ

լինելու փաստը: Շատ հնարավոր է, որ այդ համբավի մեջ բուհի պետական հաստատության կարգավիճակը իր նախնական դրական ազդեցությունն է ունեցել, որը, որպես նախնական կապիտալ պետք է իրական որակով պահպանվի ու ամրապնդվի: Հետաքրքիր է, որ առաջին ընտրությամբ հստակ մասնագիտություն ընտրածների 57.3 տոկոսը միևնույն է կարևորում է կրթության ու բուհի որակը: Նախնական դրական գնահատականի ու բարձր որակ ունեցող բուհի համբավի վրա բացասական ազդեցություն են ունեցել մի շարք գործոններ, այդ թվում օրինակ՝ համալսարանում կազմակերպվող պրակտիկայի որակը, ադմինիստրատիվ անձնակազմի վերաբերմունքը ուսանողների նկատմամբ, դասավանդման մեթոդաբանությունների բազմազանության պակասը, դասից դուրս դասախոսի հետ շփվելու սահմանափակ հնարավորությունները, աշխատանքին նախապատրաստող միջոցառումների որակն ու քանակը, կամպուսի հարմարավետությունը:


Առաջարկություն 4. Հաշվի առնելով այն փաստը, որ կրթության որակի դրական ընկալումը կրթությունը ԵրՊԼՀ-ում շարունակելու նախապայման է հանդիսանում, ապա հրատապ է բակալավրական կրթական ծրագրերի վերանայման ու արդիականացման հարցը, որտեղ հատուկ ուշադրություն պետք է դարձնել արտադրական պրակտիկայի կազմակերպմանը և դրա փոխկապակցվածությանը տվյալ որակավորման վերջնարդյունքների հետ: Ավելին, այս մակարդակում կրթական վերջնարդյունքների վերանայման ընթացքում նաև պետք է հստակեցնել համապատասխան դասավանդման մեթոդաբանական հենքը, հետազոծի անհատականացումը, կրթական խորհրդատուների ու մենթորների ինստիտուտի հիմնումն ու ադմինիստրատիվ գործառնությունների թեթևացումն ու ապաբյուրոկրատացումը:

Որակի ապահովումն առանց դասախոսների մասնակցության հնարավոր չէ

Որակավորումների շրջանակի տեսանկյունից վերլուծությունը հաստատում է երկու տարբերակված համալսարանի առկայությունը⁸, որը պահանջում է անձնակազմի

⁸ Շրջանավարտներին հարց էր տրվել առ /Մ/ ԵրՊԼՀ-ում ձեր ընտրած մասնագիտությամբ /մասնագիտացմամբ/ ուսումնառությունը ինչքանո՞ւ պատշաճ պատրաստվածություն է տվել ձեզ: Պատասխան տարբերակները հետևյալն են՝ Ա-11 ուսումնասիրված տեսությունները բացատրող մեթոդներն ու մոտեցումները մեկնաբանելու կարողություն, Ա-21 որևէ թեմայից քննարկվող գործընթացի կամ նյութի վերաբերյալ մեկնաբանություններ անելու, քննադատաբար վերլուծելու կարողություն, Ա-22 որևէ թեմայից քննարկվող գործընթացի կամ նյութի վերաբերյալ դատողություններ անելու, տրամաբանական շղթա կառուցելու ու հետևություններ անելու կարողություն, Ա-23 համալսարանում ուսումնառության ու պրակտիկայի ընթացքում անձնապես ու սոցիալապես հասունացում, Ա-31 քննադատական մտածողության ու քննարկումների արդյունքում որևէ թեմայի շուրջ գրավոր աշխատանքների իրականացում, Ա-32 այլ մշակույթները արժևորելու, դրանցում տեղ գտած այս կամ այն մոտեցումները վերլուծելու, բացատրելու, մեկնաբանելու կարողություն, Ա-33 դասընթացի շրջանակում հետազոտական աշխատանքի միջոցով փորձարարական հետազոտության

կրթական կարիքների ծրագրավորման ռազմավարական մոտեցում: Լավագույն շրջանավարտների և ուժեղների 41.7-ական տոկոսները դասավանդման մեթոդաբանությունը գնահատում են գերազանց: Բացի այդ, վերջիններիս 44.1 և ուժեղների 26.5 տոկոսը քննադատական մտածողության ձևավորմանն ուղղված մեթոդական աշխատանքները գնահատում են գերազանց, իսկ ուժեղների 50 տոկոսն այն գնահատում է անբավարար: Այսպիսի տարբերակվածությունը կարող է մատնանշել համալսարանում տարբեր իրողությունների առկայությունը: Ավելին, ԵրՊԼՀ-ն որակի հիմնավորմամբ ու պետական բուհի կարգավիճակով պայմանավորված ընտրածների առանձնացված վերլուծությունը վերահաստատեց այս տարբերակվածությունը: Կրթության որակի առկայությամբ կողմնորոշված սպառողներ հանդիսացող ուսանողների խումբը համարում է, որ համալսարանում բավարար քանակությամբ գրավոր աշխատանքներ են իրականացվում քննարկումների ու քննադատական մտածողության արդյունքում, ինչի հետ համաձայն չէ կարգավիճակով կողմնորոշված սպառող խումբը:



նախագծի կազմում, տվյալների հավաքագրում և վերլուծություն, արդյունքների մեկնաբանում, U-34 պրակտիկայի շրջանակում հետազոտական աշխատանքի միջոցով փորձարարական հետազոտության նախագծի կազմում, տվյալների հավաքագրում և վերլուծություն, արդյունքների մեկնաբանում, U-42 դասընթացներից դուրս համալսարանական կյանքի /միջոցառումներ, ուսանողական կյանք, պրակտիկա/ միջոցով ինտելեկտուալ շրջանակի ու աշխարհընկալման ամբողջականացում, U-43 ուսումնառության ընթացքում տարբեր միջոցներով քաղաքացիության ու առաջնորդության հասկացությունների ընդհանրական ընկալում, U-44 օտար լեզուների ուսուցման միջոցով այլ մշակույթների ու այդ բազմազանության գիտակցում, U-52 ինքնուրույն աշխատանքի ու ժամանակի կառավարման հմտությունների ձևավորում:

Որակյալ կրթության պահանջարկ ունեցող, ինչպես նաև գոյացնող, ուսանողների համար համալսարանում առկա է նաև համապատասխան առաջարկը, այսինքն՝ դասախոսներն ու համալսարանը տարբերակված աշխատանք են տանում, ունեն այդ հզորությունը: Մնացածների դեպքում, հավանաբար բացատրվելով նաև այն փաստով, որ պետական նմուշի դիպլոմի պահանջարկով բուհ եկածների պահանջները որակյալ կրթության առումով ձևակերպված չեն վատ իմացության և/կամ ցանկության բացակայության պատճառով, արդյունքում բուհական կյանքում Ա-31 ձեռնահաստության ձևավորմանն ուղղված աշխատանքների հետ չեն առնչվում: Սա որոշակի կամընտրականության առկայություն է ենթադրում:


Եթե համակարգված պարտադիր պահանջ լիներ Ա-31-ը, ապա իրենց գնահատականներում այդ երկու խմբերը այդքան չէին տարբերվի: Բուհը կրթական ծրագրերի վերանայմանը զուգահեռ պետք է զարգացնի դասավանդող անձնակազմի մասնագիտական զարգացման համակարգը: Այլ հետազոտության արդյունքում պարզ է դարձել, որ համալսարանում դասախոսների մեթոդական հմտությունների արդիականացման աշխատանքները, դեռևս չեն համապատասխանում ներկա շուկայի կողմից պահանջվող ձեռնահաստությունների ձևավորման համար կիրառվող մեթոդաբանությունների յուրացման պահանջի հետ: Առանձին դասախոսներ և/կամ ստորաբաժանումներում որոշակի աշխատանքներ իրականացվում են, սակայն գործող համապարփակ և համընդգրկուն մասնագիտական զարգացման համակարգը իր նախնական քայլերն է անում և պրոֆեսորադասախոսական անձնակազմի կրթական կարիքների ծրագրավորումը չի փոխկապակցում կրթական ծրագրերի բարեփոխման ռազմավարության հետ:

Առաջարկություն 5. Կրթական վերջնարդյունքների վերաձևակերպումը 2011 թվականին ընդունված ազգային որակավորումների հենքով և 2013 թվականին ծրագրային հավատարմագրման պահանջով պայմանավորված պարտադիր ու հրատապ միջոցառում են դառնում: Սա հանգեցնելու է ըստ որակավորման առարկայական նկարագրերի, ուսումնական պլանի վերանայմանը: Բուհը պետք է նախաձեռնի այդ աշխատանքներին այս պահին ամենապատրաստ որակավորումների ու համապատասխան ստորաբաժանումների փորձարկումը, որի ընթացքում առարկայական նկարագրերում առանձնահատուկ ուշադրության կենթարկվեն կրթական վերջնարդյունքների ձևակերպման առանձնահատկությունները: Վերջիններս պիտի լինեն չափելի, գնահատելի, ուսանողի և այլ շահեկիցների համար հասանելի ու մատչելի: Բացի այդ, առանձնահատուկ ուշադրության պիտի արժանանա մեթոդական ձեռնահաստությունների ձևավորմանը միտված կրթական վերջնարդյունքների գետնիկավորությունը ու դրա կառուցվածքը յուրաքանչյուր առարկայական նկարագրում: Վերջապես, շարունակական և լրացուցիչ կրթության կենտրոնի առաջիկա կրթական ծառայությունը պետք է միտված լինի դասախոսների շրջանում կրթական վերջնարդյունքների հիման վրա առարկայական նկարագրերի մշակման, դրանց դասավանդման մեթոդների ընտրության, փոխկապակցված գնահատման

մեթոդների ու գործիքների սահմանման, ուսանողակենտրոն դասընթացների մշակման, մշտադիտարկման ու գնահատման հմտությունների ձևավորմանն ուղղված պրակտիկ դասընթացների մշակմանը և դասախոսների վերապատրաստման ժամանակացույցի բանակցմանը: ԵրՊԼՀ-ի դեպքում առաջին փորձարկումը իրականացվել է հաջողությամբ, որի այլ կրթական ստորաբաժանումների պրոֆեսորադասախոսական անձնակազմին մատուցելու ժամանակացույցը պիտի հաստատվի և իրականացվի ըստ վերջնարդյունքների վերաձևակերպման հերթականության:

Ձեռնահասությունների ձևավորումը՝ որպես մարքեթինգային գործիք

Ուսումնասրության ընթացքում ձեռնահասությունների թերի ձևավորումը հետագայում ազդում է շրջանավարտների ճկունության ու բարձրակարգ կարողականությունների առկայության վրա, որը չի կարող չազդել շուկայում իրենց ունեցած մրցունակության ու զբաղեցրած դիրքի վրա: Աշխատանքի շուկայում մասնագիտական կամ փորձագիտական աշխատանքներ կատարողները, որպես կանոն, ավելի լավ զարգացած ձեռնահասություններ ունեն, քան ադմինիստրատիվ պաշտոններ զբաղեցնողները: Համալսարանի սպառողական խմբերին տրամադրվող տարբերակված առաջարկը հետագայում նաև կանխորոշում է շրջանավարտների հնարավորությունը աշխատանքի շուկայի որոշակի շերտում հայտնվելու առումով:




Աշխատանքի շուկայում ամենաթույլ աշխատակիցները, ովքեր բուհի շրջանավարտ են ձեռնահասությունների առումով ամենաբացասական գնահատականն ունեն⁹, իսկ ամենաուժեղները՝ հակառակը: Համալսարանը իր մասնակցությունն ունի այս գործընթացում: Այդ թուլության մի մասն էլ վերագրվում է համալսարանական համակարգային թերացումներին: Այս ամենի հիման վրա կարելի ենթադրել, որ բուհը ամբողջությամբ չի օգտագործում իր ներուժը և աշխատանքի շուկայի մի հսկայական հատված դեռևս յուրացված չէ համալսարանի կողմից: Ավելին, բուհի պատրաստման մակարդակից դժգոհները, որպես կանոն ձեռնահասությունների գնահատման ժամանակ ավելի թույլ զարգացած արդյունքներ են արձանագրել, իսկ նրանք, ովքեր բավարարված են եղել, լավ զարգացած ձեռնահասությունների ու մասնագիտական համապատասխանության ընկալում են ունեցել: Մա նորից համակարգային խնդրի առկայության մասին է խոսում: Բուհն ունի երկու տարբերակված շուկա, որը արտաքին շուկայում թուլացնում է վերջինիս դերն ու կարող է հեռանկարում, երբ Հայաստանի աշխատանքի շուկայում ավելի պահանջարկված լինեն մեթոդական և մասնակցային հմտությունները, աստիճանական բացասական ազդեցություն գոյացնել: Վերջապես, այս ամենի վրա ազդում է *ԵրՊԼՀ Աքիլեսյան գարշապարը* հանդիսացող վիճակագրական տվյալների հետ աշխատելու ձեռնահասության ավանդաբար լուսանցքային մոտեցումը:

Վիճակագրական տվյալներով աշխատելու գերազանց հմտություն ունեցողները, ըստ արդյունքների առավելություն ունեն անբավարար վիճակագրական հմտություններ ունեցողների համեմատ: Այն շրջանավարտները, ովքեր ուսումնառության ընթացքում, պրակտիկայի ժամանակ և հետագայում ավելի լավ են յուրացրել քանակական մեթոդների հետ աշխատանքը, կարողացել են մեկնաբանել ու կիրառել տեղեկատվություն, այդ շրջանավարտները մյուս բոլոր ձեռնահասությունների կտրվածքով ավելի բարձր ինքնագնահատական ու ընկալում են ունեցել: Ի տարբերություն մաթեմատիկական, վիճակագրական, մեթոդական անբավարար հմտություններ ունեցողները մնացած բոլոր ձեռնահասությունների գնահատման

⁹ Շրջանավարտներին հարց էր տրվել առ /Բ/ Արդյո՞ք ԵրՊԼՀ-ում ստացած մասնագիտությունը /մասնագիտացումը/ ձեզ պատշաճ նախապատրաստել է հետևյալ բոլոր ենթակետերով: Պատասխան տարբերակները հետևյալն են՝ Բ-11 մասնագիտությանը /մասնագիտացմանը/ վերաբերող առարկայական գիտելիք և ուսումնասիրության առարկայի իմացություն, Բ-12 մասնագիտությանը /մասնագիտացմանը/ վերաբերող տեսությունների իմացություն, Բ-13 մասնագիտությանը /մասնագիտացմանը/ վերաբերող ուսումնասիրության առարկայի մասին հիմնական տեսական հենքը ապահոված անցյալի ու ներկայի գիտնականների իմացություն, Բ-21 առկա կիրառական կամ տեսական խնդրի սահմանման ու լուծման համար ուսումնառության ընթացքում ձեռքբերված գիտելիքի համակարգված կիրառման կարողություն, Բ-22 քննադատաբար մտածելու կարողություն, Բ-31 մասնագիտությանը /մասնագիտացմանը/ վերաբերող տեղեկատվության որոնման գործընթացի ու դրա գիտելիքի վերածման կարողություն, Բ-32 տեղեկատվություն որոնելու, այն մեկնաբանելու և կիրառելու կարողություն, Բ-41 համոզում առ այն, որ հաճախ, եթե ոչ միշտ տարբեր տեսանկյուններն առանձնացնելու ու դրանք ըմբռնելու անհրաժեշտություն կա, Բ-51 համոզում առ այն, որ ուսումնառությունը շարունակական գործընթաց է և տարբեր ձևերով շարունակվում է ամբողջ կյանքի ընթացքում:


Ժամանակ ավելի ցածր ցուցանիշներ են ամրագրել և վատ ինքնագնահատական են ունեցել:



Առաջարկություն 6. Այս ամենը առաջարկում է հստակ փոխկապակցվածություն, որը կրթական ծրագրերի նախագծման ու վերանայման ժամանակ հարկ է առանձնահատուկ ուշադրության արժանացնել: Ուսումնառության մաթեմատիկա-մեթոդական հատվածը հետագա հզորացման անհրաժեշտություն ունի: Հրատապ է բոլոր առարկայական նկարագրերի և առաջին հերթին մագիստրոսական կրթական ծրագրերի ամբողջական վերանայումը, որտեղ մաթեմատիկա-մեթոդական հատվածը, որը ուղղված է բարձրակարգ մտածողության ձևավորմանը, կենթարկվի վերանայման և հորիզոնական ու ուղղահայաց ինտեգրացման: Այս առթիվ, հարկավոր է պրոֆեսորադասախոսական անձնակազմի համար կազմակերպել մասնագիտական զարգացման դասընթացներ, որոնք միտված կլինեն ուսանողակենտրոն դասընթացի ձևավորման հիմունքների ու կրթական վերջնարդյունքների հստակեցմանը միտված Բյուրի տաքսոնոմիայի սկզբունքների կիրառական դասընթացի մատուցմանը, որի արդյունքում դասընթացը ավարտած դասախոսները կվերանայեն իրենց առարկայական նկարագրերը՝ հստակ ձևակերպելով դասավանդման ու հետազոտական աշխատանքների մեթոդաբանությունը:

Հեզվի իմացությունից դեպի բարձրակարգ մտածողություն

Թե ընդհանրական հմտությունները, թե մեթոդականները ԵրՊԼՀ-ում բարելավման կարիք ունեն՝ հաշվի առնելով աշխատանքի շուկայի հստակ ձևակերպած պահանջարկը: Մակայն այդ բարելավումը պետք է ունենա կարճաժամկետ և երկարաժամկետ մոտեցումներ: Բացի գրավոր խոսքի հմտությունից մնացած բոլոր ընդհանրական հմտությունների (քննադատաբար մտածել, համակարգչային գրագիտություն ունենալ, ցուցադրել բանավոր խոսքի հմտություններ, ցուցադրել գրավոր խոսքի հմտություններ) ձևավորման մակարդակը բուռնում պետք է բարելավվի: Սա հրատապ խնդիր է, քանի որ ի տարբերություն եվրոպական զարգացած աշխատանքային շուկա ունեցող երկրների, Հայաստանի շուկան առաջին հերթին կարևորում է հմտությունների այս տեսակը: Մյուս մեծ ձեռքվածքը արձանագրվել է **մեթոդաբանական հմտությունների** (օգտագործել վիճակագրական տվյալներ, կատարել տարրական մաթեմատիկական հաշվարկներ, հասկանալ ու գործածել պատմական փաստերն ու նյութերը, կիրառել գիտական տեղեկատվությունը և կատարել դատողություններ, խնդրի լուծման նպատակով համադրել տարբեր գիտելիքները) դեպքում:



Ի տարբերություն զարգացած աշխատանքի շուկաների սոցիալ-զգացական և մեթոդաբանական հմտությունները երկրորդային կարևորություն ունեն, բայց և այնպես ԵրՊԼՀ-ն պետք է հեռանկարային ծրագրավորման ենթարկի այս հատվածը, քանի որ սա թույլ կտա ավելի խորը ներթափանցել աշխատանքի շուկա և նախապատրաստված լինել ապագայի միտումներին, որոնք ավելի բարդ ու ինքնաուսուցանվող համակարգերի դեպքում առաջնային դերը տալիս են այս երկու

տիպի հմտություններին: Շուկայի առկայության տեսանկյունից արձանագրվել է հետաքրքիր արդյունք: Վերջապես, **մասնագիտական հմտության** (*կիրառելի մասնագիտության շրջանակում յուրացրած հասկացությունները*) տեսանկյունից աշխատանքի շուկան դեռևս համադրելի կարևորության աստիճան ունի՝ 0.15 միավոր բացասական տարբերությամբ: Եթե այս բացասական միտումը շարունակվի նաև ապագայում, ապա դա չի նշանակում, որ գիտելիքն այլևս կարևոր չէ, դրա իմացության մակարդակն է փոփոխվում: Բարձրագույն կրթության և այն նկարագրող որակավորումների շրջանակում մասնագիտական գիտելիքի և մեթոդաբանական հմտությունների համադրության արդյունքում ձևավորվում են այն ձեռնահասությունները, որոնք համապատասխանում են ISCED5, ISCED6 մակարդակներին:

Առաջարկություն 7. Առաջին հերթին բուհը կրթական ծրագրերի վերանայման ժամանակ պետք է կարևորի ընդհանրական հմտությունների ձևավորումը, մասնավորապես քննադատական մտածողության ու համակարգչային գրագիտության տեսանկյունից, որտեղ պիտի առանձնացվի հատուկ ծրագրային փաթեթների (օրինակ՝ SPSS) իմացությունը: Բացի այդ, եթե մինչ այժմ ԵրՊԼՀ շրջանավարտները լեզվի իմացությամբ համեմատական առավելություն են ունեցել, ապա առաջիկայում լեզվի իմացության մակարդակը պիտի վերանայվի բարձրակարգ մտածողության ձևավորման տեսանկյունից, երբ այն գիտելիքի մակարդակից կտեղափոխվի ընկալման ու գնահատման մակարդակ (տես Բյուսի տաքսոնոմիան): Դրան զուգահեռ, երկարաժամկետ ծրագրավորման պիտի ենթարկվի մեթոդաբանական հմտությունների ձևավորումը, որը դեռևս առաջնային չէ, սակայն արդեն արձանագրել է որոշակի ճեղքվածք: Բուհը պիտի պատրաստվի ապագայի աշխատանքի շուկային, որտեղ անխուսափելիորեն առաջնային պահանջարկվածություն են ունենալու մասնակցային ու մեթոդաբանական հմտությունները, քանի որ համակարգային բարեփոխումները առաջադրում են ավելի բարդ՝ ինքնաուսուցանվող կառուցվածքների գոյացման միտումները: Այս նպատակով բուհի մագիստրոսական կրթական ծրագրերի համար առաջիկա երեք-չորս տարիների ընթացքում պետք է մշակվի ԿՓԵՀ տեղեկատվական փաթեթը, որը թույլ կտա այս բոլոր խնդիրները լուծել համադրված մոտեցման որդեգրմամբ: Այս գործընթացի ծրագրավորումը նաև թույլ կտա վեր հանել բոլոր համակարգային բացերը, այդ թվում նաև պրոֆեսորադասախոսական կազմի կրթական կարիքները, որոնց ծրագրավորումը թույլ կտա համակարգը տեղափոխել մեկ այն գործառնության մակարդակ:

Բուհը շուկայի առաջընթացի երաշխավորողներից մեկն է

Համալսարանը աշխատանքի շուկայի հետ ունի երկակի կապ՝ ներգործուն և ներազդվող: Այս իմաստով կրթության համապատասխանությունը մասնակի լուծում

է, որը ենթադրում է շրջանավարտների որոշ ձեռնահասությունների թերզարգացածություն, իսկ որոշների էլ գերզարգացածություն: Եթե մի շարք եվրոպական երկրներում աշխատանքի շուկան առաջնային է համարում մասնակցային և մեթոդական հմտությունները, որոնց հաջորդում են սոցիալ-զգացական և ընդհանրական հմտությունները, ապա Հայաստանում աշխատանքի շուկան դեռևս առաջնային է համարում ընդհանրական և սոցիալ-զգացական, ապա միայն մեթոդաբանական հմտությունները, իսկ մասնակցայինի առումով դեռևս շուկան ձևավորված պահանջարկ չունի: Բայց և այնպես, այս դեպքում բուհը ձևավորում և ավելի է կարևորում մասնակցային հմտությունները: **Մասնակցային հմտությունների** (*որպես քաղաքացի ծառայել ձեր համայնքին, առաջնորդել տարբեր մարդկանց*) տեսանկյունից բուհը ավելի բարձր մակարդակ է ապահովում, քան դրա պահանջարկը աշխատանքի շուկայում: Սա նաև կարող է հաստատել այն դատողությունները, որ բուհերը տնտեսական պահանջարկից զատ նաև սպասարկում և գոյացնում են սոցիալական պահանջարկ, որը այս դեպքում քաղաքացիական է: Միայն սոցիալ-զգացական հմտություններն է, որ նույնչափ կարևորվում են գործատուների և բուհի կողմից: Այն արտացոլվում է շրջանավարտների համարժեք պատրաստվածության մակարդակով: Սոցիալ – զգացական հմտություններից հարկավոր է առանձնացնել տարբեր թիմերում աշխատելու հմտությունը, որը գործատուները շատ են կարևորում, իսկ բուհը դեռևս չի կարողանում պատշաճ մակարդակ ապահովել: Սա դասավանդման մեթոդաբանության տեսանկյունից ենթադրում է վերանայել առարկայական նկարագրերը և այնտեղ կրթական վերջնարդյունքներում ներառել թիմային աշխատանքի միջոցով գիտելիքի յուրացման բաղադրիչներ:

Առաջարկություն 8. Բուհը շարունակում է սոցիալական պատվեր գոյացնել, որը հետագայում ներագրում է տնտեսական պահանջարկի կառուցվածքի վրա: Հետևաբար, կրթության որակի համապատասխանությունը, ինչպես նաև շրջանավարտների զբաղվունակության նպատակով կրթական վերջնարդյունքների համապատասխանեցումն աշխատանքի շուկային պետք է կրի ինչ-որ չափով մասնակի բնույթ, քանի որ վերջինիս նույնական համապատասխանեցումը կարող է քայքայիչ լինել հասարակության սոցիալական պահանջարկի ձևավորման տեսանկյունից: Պետական քաղաքականություն մշակելիս հարկ է հաշվի առնել բուհերի այդ առանձնահատկությունը և դրանց չմոտենալ պետական այլ կառույցների կատարողականի գնահատման մեթոդաբանության ու գործիքակազմի կիրառման նպատակադրմամբ: Վերջապես, կրթական վերջնարդյունքներով վերաձևակերպված առարկայական նկարագրերում ուշադրություն դարձնել թիմային աշխատանքի միջոցով գիտելիքի յուրացման բաղադրիչին: Ավելին, դասախոսների մասնագիտական զարգացման նպատակով մշակված դասընթացներում առանձնահատուկ տեղ տալ այդ հմտությունների ձևավորման մեթոդաբանության, դրա ծրագրավորման, մշտադիտարկման ու գնահատման հատվածին:

ԳԼՈՒԽ 4. ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

ԵրՊԼՀ օրինակով իրականացված հետազոտության արդյունքում հաստատվեց զբաղվածության փոխկապակցվածությունը կրթության հետ: Բնարկե, բուհը դեռևս հիմնականում աշխատանքի շուկայում զբաղեցնում է կրթության ոլորտին վերաբերող հատվածը, սակայն ներթափանցման մակարդակից պարզ է դառնում, որ կրթության որակին զուգընթաց շրջանավարտները կարողանում են ավելի բարձրակարգ փորձագիտական ու մասնագիտական աշխատանք գտնել: Այս բուհի օրինակով պարզ դարձավ, որ պրակտիկաների ոչ գործնական բնույթը, դրանց կրթական որակավորման հետ հաճախ սերտ փոխկապակցվածության բացակայությունն ու ժամանակային սահմանափակումները զուգադրվելով բուհում հիմնականում տեսական գիտելիքների փոխանցմամբ դեռևս շոշափելի ազդեցություն չեն գոյացնում ուսանողների զբաղվածության մեծացման վրա: Ավելին, բուհ ընդունվելիս և ուսումնառության ընթացքում սովորողի համար հստակ ձևակերպված ու հասանելի նկարագրված չեն տվյալ որակավորմամբ ավարտելիս գործող շուկայում առկա զբաղվածության հնարավոր հետագծերը: Այս իրավիճակը փոխկապակցվում է նաև պրակտիկաների ոչ գործնականության հետ և դժվարացնում է բուհից աշխատանքի շուկա անցումը: Բացի այդ, կարելի է ենթադրել, որ այդ տեղեկատվության բացակայության պայմաններում ուսանողի համար շատ ավելի դժվար է կողմնորոշվելը, թե պրակտիկայի հնարավոր և համարժեք տարբերակները որոնք կարող են լինել: Սա էլ իր հերթին աշխատանքի շուկային ադապտացվելու ու անցումը հեշտությամբ հաղթահարելու տեսանկյունից լրացուցիչ ճնշումներ է առաջացնում: Իրավիճակի բարելավման համար ազգային և հաստատութենական մակարդակներում կարելի է որդեգրել մի շարք քաղաքական (policy) որոշումներ, որոնք թույլ կտան ներագդել ներբուհական գործընթացների վրա, իսկ բուհերի դեպքում ապահովել արդիականացման ու միջազգայնացման գործընթացների համակարգված գործադրումը: Առաջին, ազգային մակարդակում ՈԱԱԿ-ի ինքնագնահատման փաթեթներում ենթակառուցվածքային հավատարմագրման գործընթացի շրջանակներում որպես պահանջ առաջարկվում է դիտարկել բուհի ռազմավարության մեջ միջազգայնացման բաղադրիչի կամ առանձին միջազգայնացման ռազմավարական փաստաթղթի առկայությունը, որը պետք է պարտադիր ունենա մշտադիտարկման ու գնահատման ներկառուցած համակարգ: Այն թույլ կտա հստակ գնահատել առաջընթացը: Երկրորդ, բուհական մակարդակում միջազգայնացման ռազմավարական գործողությունների շրջանակում նպատակահարմար է ներառել ԿՓԵՀ պիտակի ձեռքբերմանը միտված միջոցառումների ամբողջությունը: Այն թույլ կտա ըստ ընդունված առաջարկությունների ու կառուցածքի մշակել ԿՓԵՀ տեղեկատվական փաթեթը, որտեղ բազում բաղադրիչների շարքում բուհը կտրամադրի ըստ որակավորումների առկա զբաղվածության մասին տեղեկատվություն, ինչպես նաև կգործադրի պրակտիկայի եռակողմ պայմանագրի օրինակելի ձևը: Այն իր հերթին փոխկապակցված կգոյացնի բուհում շրջանավատների ու գործատուների

մասակցությամբ հետադարձ կապի ձևավորման ու շարունակական զարգացման հրամայականը: Երրորդ, պրակտիկայի վերջնարդյունքների մշակումը կփոխկապակցի բուհի կրթական գործընթացը և դրա արդյունքում ակնկալվող ձեռնահասությունների համադրումը պրակտիկայի ընթացքում իրականության մեջ դրանց փորձարկման անհրաժեշտության հետ: Այն թույլ կտա պրակտիկան համապատասխանեցնել տվյալ որակավորման պահանջներին ու ծառայել սովորողի, թե կրթական կարիքներին, թե կրթությունից աշխատաշուկա անցման դյուրացմանը: Վերջապես, այս բուհի օրինակով պարզ դարձավ, որ ամենայն հավանականությամբ մեր բուհերը իրենց չեն դիտրակում որպես աշխատաշուկա ու գործատու, որը կարող է մասամբ սպառել պրակտիկայի ձևավորված առաջարկը: Վերջինի գիտակցման արդյունքում բուհը կկարողանա համակարգել կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքային գործառույթների պահանջարկը, դրանք համադրելով կրթական վերջնարդյունքներով նկարագրված պրակտիկայի առաջարկի հետ:

Հետազոտության արդյունքում հստակ ուրվագծվեց կրթության որակի, որպես *բրենդի* ձևավորման ու պահպանման հրատապությունը: Այն պետք է մտահոգի, թե ոլորտի, թե բուհական պատասխանատուներին: Այն թե աշխատանքի շուկայում շրջանավարտների զբաղվածությամբ պայմանավորված ներթափանցման մակարդակի, թե բուհի կրթական ծառայություններից օգտվելու ու մյուս կրթական մակարդակներում ուսումը շարունակելու տեսանկյունից հետազոտության տվյալների միջոցով հաստատեց դրական փոխկապակցվածության առկայությունը: Բացի այդ, որակավորումների շրջանակի տեսանկյունից իրականացված վերլուծությունը ցույց տվեց երկու տարբերակված համալսարանի առկայությունը, որը խոսում է անձնակազմի կրթական կարիքների ծրագրավորման անհրաժեշտության մասին: Ավելին, հետազոտության արդյունքում պարզ դարձավ, որ ուսումնառության ընթացքում ձեռնահասությունների թերի ձևավորումը հետագայում ազդում է շրջանավարտների ճկունության, ինքնագնահատականի ու բարձրակարգ կարողականությունների առկայության վրա: Այն իր հերթին ազդում է շուկայում վերջիններիս ունեցած մրցունակության ու զբաղեցրած դիրքի վրա: Սա ամենայն հավանականությամբ հետագայում ազելու է *զբաղվունակության* վրա: Այս դեպքում ևս իրավիճակի բարելավման համար ազգային և հաստատութենական մակարդակներում կարելի է որդեգրել մի շարք քաղաքական (policy) որոշումներ, որոնք թույլ կտան ներագդել ներբուհական գործընթացների վրա, իսկ բուհերի դեպքում ապահովել արդիականացման ու միջազգայնացման գործընթացների համակարգված գործադրումը: Առաջին, ազգային մակարդակում ՈԱԱԿ-ի ինքնագնահատման փաթեթներում ծրագրային հավատարմագրման գործընթացի շրջանակներում որպես պահանջ առաջարկվում է դիտրակել տվյալ որակավորման համար ԿՓԵՀ տեղեկատվական փաթեթի համապատասխան հատվածների առկայությունը, մասնավորապես առարկայացանկը (Course Catalogue) և առարկայական նկարագրերը, որոնք փոխկապակցված են Որակավորումների ազգային շրջանակի տրամաբանության ներքո մշակված կրթական

վերջնարդյունքների հետ, ինչպես նաև հստակ չափելի են ու գնահատելի: Երկրորդ, բուհերը ծրագրային հավատարմագրմանն ընդառաջ գնալով համատեղ կամ առանձին պետք է մշակեն պրոֆեսորադասախոսական կազմի վերապատրաստման դասընթաց, որը միտված կլինի ապահովելու կրթական վերջնարդյունքներով ուսանողակներին ուսումնառության ու առարկայական նկարագրերի մշակմանը:

Վերջապես, հետազոտության արդյունքում հստակ ուրվագծվեց համալսարանի երկակի կապը աշխատանքի շուկայի հետ: Այն մի կողմից ներգործուն է, մյուս կողմից՝ ներազդվող: Եթե ներազդեցության տեսանկյունից աշխատանքի շուկան և գործատուն առավել արժևորում են ընդհանրական և մեթոդաբանական հմտությունները, ապա ներգործության առումով բուհը առկա պահանջարկից առավել ապահովել է մասնակցային հմտությունների առկայությունը: Հետևաբար, կրթության որակի համապատասխանությունը բացառապես շուկային, ինչպես նաև շրջանավարտների զբաղվունակության նպատակով կրթական վերջնարդյունքների համապատասխանեցումն աշխատանքի շուկային պետք է կրի ինչ-որ չափով մասնակի բնույթ, քանի որ վերջինիս նույնական համապատասխանեցումը կարող է քայքայիչ լինել հասարակության սոցիալական պահանջարկի ձևավորման տեսանկյունից: Խուսափելու համար նման բացասական զարգացումներից կրթության համապատասխանության սկզբունքը պիտի ունենա երկու կողողինատական առանցք, որոնցից մեկը պարբերաբար կճշտի ներքին գործընթացներով պայմանավորված “զարկերակի” աշխատանքը շուկայի համեմատ, իսկ մյուսը այն կհամադրի որակավորումների շրջանակի՝ կրթական նպատակների հետ: Այս դեպքում նորից հրատապ է ԿՓԵՀ տեղեկատվական փաթեթի մշակումն ու վերջնականացումը, ինչպես նաև դրա հիման վրա ԿՓԵՀ պիտակի ձեռքբերումը բուհերի կողմից: Այս վերլուծության առաջարկությունների ու եզրահանգումների հատվածում նկարագրված նախընտրելի գործողությունների բազմությունից հարկ է առանձնացնել մեկը, որը վերթեմատիկ ու շրջանակային բնույթ ունի՝ ԿՓԵՀ տեղեկատվական փաթեթը և միջազգայնացման ռազմավարությունը: Կրթության ոլորտի տարբեր պատասխանատուների համար առաջնահերթ է դառնում միջազգայնացման ռազմավարության որդեգրումը, որը թույլ կտա արդիականացնել կրթությունն ու լուծել որակի ու համապատասխանության առկա խնդիրները: Սակայն, այս ամենի լուծման համար բուհերը պիտի ձեռնամուխ լինեն ԿՓԵՀ տեղեկատվական փաթեթների մշակմանն ու ԿՓԵՀ պիտակի ձեռքբերմանը, ինչը թույլ կտա վերջիններիս համաեվրոպական կրթական տարածքի քարտեզի վրա ամրագրել սեփական ներկայությունը:

Գրականության ցանկ

1. Atlay, M. & Harris, R. (2000) An institutional approach to developing students' 'transferable' skills, *Innovations in Education and Training International*, 37(1), 76–81.
2. BOLOGNA WORKING GROUP ON QUALIFICATIONS FRAMEWORKS. A Framework for Qualifications of the European Higher Education Area. Copenhagen: Ministry of Science, Technology and Innovation, 2005.
3. Bologna Process. Available at:
<<http://www.coe.int/T/DG4/HigherEducation/EHEA2010>
4. Borden, V. (2005) Using Alumni Research to Align Program Improvement with Institutional Accountability, *New Directions for Institutional Research*, 126, 61-72 (Wiley Periodicals, Inc.).
5. Bourdieu, P. & Passeron, J.-C. (1970) *La reproduction: Eléments d'une théorie du système d'enseignement* (Paris, Editions de Minuit).
6. Bourdieu, P. & Passeron, J.-C. (1964) *Les héritiers: les étudiants et la culture* (Paris, Editions de Minuit).
7. Bradley, S., & Nguyen, A. N. (2004). The school to work transition. In G. Johnes & J. Johnes (Eds.), *International handbook of education economics* (chap. 14). Edward Elgar.
8. Brown, P. & Hesketh, A. (2004) *The mismanagement of talent: Employability and jobs in the knowledge economy* (Oxford, Oxford University Press).
9. Buchel, F. (2002). The effects of overeducation on productivity in Germany—the firms' viewpoint, *Economics of Education Review*, 21, 263–275.
10. Cabrera, A, Weerts, D, Zulick, B. (2005) Making and Impact with Alumni Surveys, *New Directions for Institutional Research*, 126, 5-18 (Wiley Periodicals, Inc.).
11. Chapple, M. & Tolley, H. (2000) *Embedding key skills within a traditional university. Final project report* (London, University of Nottingham - DfEE).
12. Cranmer, S. (2006) Enhancing graduate employability: best intentions and mixed outcomes, *Studies in Higher Education*, 31 (2), 169-184 (Society for Research into Higher Education).
13. EUROPEAN FOUNDATION FOR MANAGEMENT DEVELOPMENT (EFMD). The 1st EFMD meeting on undergraduate management education, September 2003, Moscow, Russian Federation.
14. EUROPEAN COMMISSION. Tuning Educational Structures in Europe. Brussels: European Commission, 2003.
15. Garcia-Aracil, A. & Van der Velden, R. (2008) Competences for Young European Higher Education Graduates: Labor Market Mismatches and their Payoffs, *Higher Education*, 55, 219-239 (Springer Science and Business Media B. V.).

16. Harvey, L., Locke, W. & Morey, A. (2002) *Enhancing employability, recognising diversity. Making links between higher education and the world of work* (London, Universities UK).
17. Heery, E. & Salmon, J. (Eds) (2000) *The insecure workforce* (London, RoutledgeFalmer).
18. Hoey, J. & Gardner, D. (2003) Using Surveys of Alumni and Their Employers to Improve an Institution. (Georgia Institute of Technology).
19. JOINT QUALITY INITIATIVE (JQI), 2004. Available at: <http://www.jointquality.org>
20. ՀՀ ԱՎԾ. (2010) Հայաստանի Մոնիթինգային պատկերը և աղբատուրքունը
21. Moreau, M. & Leathwood, C. (2006) Graduates' Employment and the Discourse of Employability: A Critical Analysis, *Journal of Education and Work*, 9 (4), 305-324.
22. Prokou, E. (2008) The Emphasis on Employability and the Changing Role of the University in Europe, *Higher Education in Europe*, 33 (4), 387-394.
23. Purcell, K., Morley M. & Rowley R. (2002) Employers in the New Graduate Labor Market: Recruiting from a Wider Spectrum of Graduates (Employment Studies Research Unit, University of the West England and the Council for Industry and Higher Education).
24. OECD. (1999) Quality and Internationalisation in Higher Education.
25. OECD. Education Policy Analysis. Paris: OECD, 2003.
26. OECD. Quality and Recognition in Higher Education – The Cross-border Challenge. Paris: OECD, 2004.
27. OECD. Definition and Selection of Competences (2005). Available at: <http://www.oecd.org/dataoecd/47/61/35070367.pdf>
28. Scott, P. (1995) *The meanings of mass higher education* (Milton Keynes, Open University Press).
29. Sianesi, B., & Van Reenan, J. (2003). The returns to education: Macroeconomics, *The Journal of Economic Surveys*, 17(2), 157–200.
30. Sirca, N. T., Bojan Nastav, Dusan Lesjak, and Viktorija Sucic. (2006) The Labor Market, Graduate Competences and Study Program Development: A Case Study, *Higher Education in Europe*, 31(1), 53-63
31. The World Bank. (2004) Overview of Migration Trends in Europe and Central Asia, 1990-2004.
32. The World Bank. (2007) Armenia: Labor Market Dynamics, in Two Volumes (Human Development Unit, ECA).